№ 157 ՈՒՐԲԱԹ 19 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 19 ՅՈՒԼԻՍԻ № 157

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 33 Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 Թ-ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ՊԱՐՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սարուխանովօ-Կուրինսկի Ակցիոներ. Ընկերութեան Վարչութիւնը

պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն ընդհանրութեան հետեւեալը. չը նայած անցեալ տարւոյ վերջերին «Баку» և «Каспій» լրագիրներում տուած վարչութեանս յայտարարութիւններին, շատերը, փոխանակ իրանց ժամանակաւոր վկայականները (временное свидѣтельство) իսկական ակցիաների փոխելու, այդ առիթով գրաւոր հարցերով շարունակ դիմում են վարչութեանս։ Ուստի նորից յայտարարվում է, որ ժամանակաւոր վկայական ունեցողները կարող են շնորհ բերել վարչութեան գրասենեակը, Բագու, Բալախանսկայա փող., տուն Պլոտնիկովների № 4, փոխելու իրանց ժամանակաւոր վկայականները իսկական ակցիաների։

1912 Թ-ի դիվիդենդը տրվելու է այս յուլիս ամսի 18-ից միայն իսկական ակցիաների կուպոններով, իսկ ժամանակաւոր վկայականներով դիվիդենդ բոլորովին չէ տրվելու։
(ու.) ան. 571. 2—2

ՊԱԿԱՍՈՒՄ ԵՆ ՃԻՇԴ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Այն տեղեկութիւնները, որ մենք ստանում ենք մեր երկրի զանազան մասերից, ցոյց են տալիս, որ ներկայ 1913 տարին աւելի նուազ բերք պէտք է տայ մեր ազգաբնակութեանը, քան նախորդ տարին։ Բաւական շատ են այն տարածութիւնները, որոնք փչացել են երաշտից և ուր հացահատիկներն ու խոտաբոյսերը շատ Թոյլ են զարգացել։

Ճիշդ է, քիչ է առայժմ այն տեղերի թիւը, որտեղ կարկուտի, հեղեղների և չոր եղանակների պատճառներով բոլորովին փչացել են ցանքսերը, բայց ընդարձակ է այն ցանքսերի ծաւալը, որտեղ բերքը միջակից պակաս է։ Ուստի զարմանալի չէ, որ մի քանի տեղերում հացի ու խոտի գները զգալի կերպով բարձրացել են տեղական շուկայում։

Անձրեւների պակասութիւնը յունիս և յուլիս ամիսներում աննպաստ ազդեցութիւն է արել թէ այգեգործական և թէ լեռնային շրջաններում։ Արաքսի աւազանի շատ տեղերում ջրի պակասութեան պատճառով սաստկացել են գիւղացիների վէճերը միմեանց հետ և նոյնիսկ տեղի են ունեցել անախորժ ընդհարումներ և ջարդեր։

Շնորհիւ երաշտի՝ բամբակի ցանքսերը փչացել են շատ տեղերում. և եթէ առաջիկայ շաբաթներում չը տեղան անձրեւներ, այն ժամանակ բամբակագործները մեծ կորուստների պէտք է ենթարկվեն։

Գարնանացանը անշուշտ դեռ ևս կարող է Թարմանալ և զարգանալ լեռնային բարձր շրջաններում, եթէ գան անձրեւներ, բայց ով կարող է երաշխաւոր լինել, որ բարձրադիր գօտիների ցանքսերը կարող են վարձատրել երկրագործի աշխատանքը և ջղային ուշադիր վերաբերմունքը դէպի իր գործերը։

Մեր գաւառական աշխատակիցները տուին մեզ համառօտ տեղեկութիւններ զանազան տեղերի հացահատիկների և մարգագետինների մասին. բայց այդ տեղեկութիւնները, լինելով լիակատար մի շրջանի համար, անբաւարար են մի ուրիշ շրջանի մասին գաղափար կազմելու։

Ցանկալի է, որ մեր Թղթակիցները ինչպէս անցեալում, նոյնպէս և այս տարի մատակարարեն մեզ նիւթ պարզելու երկրի բերքի չափը և ժողովրդի ապահովութեան աստիճանը։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մուշից այս օրերս Թիֆլիս հասած հայ պանդուխտները պատմում են, որ այնտեղ ներկայումս համեմատաբար խաղաղ է շնորհիւ այն հանգամանքի, որ վերջերս Կ. Պոլսից Մուշ են հասել Թիւրքական բարենորոգումների ծրագիրն այդ շրջանում իրագործելու պաշտօն ունեցող միւֆեթթիշներ, Թւով վեց հոգի, որոնցից մի քանիսը օսմ. ծառայութեան մէջ մտած եւրոպացիներ, օրինակ՝ անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի և այլն։ Այդ միւֆեթթիշները առայժմ մտնում են գիւղերը և հետաքրքրվում հայոց հողային ծանօթ խնդրով՝ որոշ լուծում տալու համար այդ հարցին։

—

Նոյն գաղթականները պատմում են, որ Թիւրքական իշխանութիւնները ներկայումս շատ կասկածանքով են նայում քիւրդական առանձնայատուկ շարժումներին։ Նրանց ասելով՝ քիւրդական ապստամբական բնոյթ ունեցող խլրտումները, որոնք սկսել էին ծայր տալ Մօտկանի, Շէրվանի, Ջէզիրէի, Բօհտանի և Կէնջի ու սրանց շրջակայ վայրերում, վերջերս զսպվել են Թիւրքական կանօնաւոր զօրքերի ձիգերով, որոնք բերված էին Վանի, Ճօղլումի, Բիթլիսի և Դիարբէքիրի շրջաններից։ Թէև Թիւրքերը բաւականին զոհեր են տուել Թիւրք-քիւրդական այդ ընդհարումների միջոցին, բայց ի վերջոյ կարելի է եղել ճնշել քիւրդական շարժումները։ Քիւրդերից խլված է մեծաքանակ ռազմամթերք, մօտ 30,000 հրացան և երեք Թնդանօթ։ Թիւրք զօրքերը քարուքանդ են արել Շէրվանի ու Մօտկանի շրջանում քիւրդական 18 գիւղեր։ Քիւրդական ապստամբական այդ շարժումներին միացած են եղել շէյխ-Ջալալէդդինի կողմնակից Րըշկօդցի, Բըլգըցի, Բառականցի և Բալակցի աշիրէթները, որոնց ղեկավարն է եղել Բէդէրխանբէկի հօրեղբօրորդի յայտնի Ալի-փաշան։ Քիւրդական այդ շարժումները ծայր են տուել դեռ մայիսի կէսերին, իսկ զսպվել են անցեալ յունիս ամսի վերջերին։

—

Էրզրումից եկողները հաղորդում են, որ Թիւրքերը մեծաքանակ ռազմամթերք են կենտրոնացնում այդ նահանգի առաւելապէս հիւսիսային մասերում, ռուս-Թիւրքական սահմանի շրջաններում։ Նոյնպէս և նկատելի չափով աւելացել է Թիւրքական զօրքերի թիւը սահմանագլխային շրջաններում։ Այսպէս՝ Էրզրումից մինչև Ջիվին, մօտ երեք ժամվայ ճանապարհ, Թիւրքական զօրքերը վրաններ խփած՝ բանակել են։

—

Պետերբուրգից հեռագրում են «Times»-ին յուլիսի 4-ից.

Ասիական Թիւրքիայի բարենորոգումների վերաբերմամբ արդէն սկսվել են վիճաբանութիւնները մեծ պետութիւնների Կ. Պոլսի դեսպանների շրջանում։

Ինչպէս երեւում է, Ռուսաստանը տրամադիր է պնդելու, որ պատրաստվելիք ծրագիրը ամբողջական հանգամանք ունենայ։

Բարձր կոմիսարի պաշտօն սահմանելու մասին Ֆրանսիայի ներկայացրած առաջարկը անյարմար է նկատվում, սակայն այդ պաշտօնը կարող է մի մասը կազմել այն ծրագրի, որ պահանջում է եւրոպական ժանդարմերիայի հաստատումը։

Մինչև որ պետութիւնները որևէ ծրագրի վրա համաձայնութիւն չը կայացնեն, անհաւանական է, որ Բ. Դրան հետ որևէ խորհրդակցութիւն տեղի ունենայ Արևելեան Անատոլիայի բարենորոգումների առիթով։

—

Հայկական բարենորոգումների խնդրով զբաղվող դեսպանական յանձնաժողովը յուլիսի 3-ին նորից նիստ է կայացրել Կ. Պոլսի Ենի-քէօյ արուարձանում աւստրիական դեսպանատանը։ Այս անգամ, ի միջի այլոց, նկատի է առնվել Թիւրքահայերի ազգային սահմանադրութիւնը, որի ֆրանսերէն պատճէնը վաղուց գտնվելիս է եղել Կ. Պոլսի ռուսական դեսպանատան գործերում։ Որոշվել է այդ պատճէնից մի քանի օրինակներ յանձնել յանձնաժողովի անդամներին՝ ուսումնասիրութեան համար։

—

«Temps»-ում տպված է մի տեղեկութիւն Կ. Պոլսից՝ Փոքր-Ասիայում սկսված հայկական ապստամբութեան մասին։ Տրապիզոնի և Էրզրումի շրջանում ընդհարումներ են տեղի ունենում յեղափոխականների և կառավարչական զօրքերի միջև։

—

Ֆրանսիական «Journal» Թերթին Կ. Պոլսից, ի միջի այլոց, հեռագրում են, որ «նոր դատարաններ են կազմվելու Փոքր-Ասիայի 15 սանջակներում, ինչպէս և Արևելեան Անատոլիայի 200 կազաներում», (գաւառակ)։ Իսկ անգլիական «Daily Telegraph» Թերթին հեռագրում են նոյն տեղից, որ օսմանեան կառավարութիւնը ներկայումս աշխատում է «կանօնաւոր դատարաններ հաստատել Արևելեան Անատոլիայի այն մասերում, ուր մինչև այժմ դատարաններ գոյութիւն չեն ունեցել»։

—

Լոնդոնից հեռագրում են «Приазов. Край» լրագրին, որ ռուս զօրքերով Հայաստանը ժամանակաւորապէս գրաւելու հարցը հերթից հանել է ինքը Ռուսաստանը անգլիական Թագաւորի Թելադրութեամբ։

—

Լոնդոնի «Daily Express» լրագրին հաղորդում են, որ պետութիւնները իբր Ռուսաստանին լիազօրել են գրաւելու Հայաստանը։

—

Վիէննայում հաստատապէս խօսում են, որ երբ Ռուսաստանը Հայաստան կը մտնի նոյնիսկ, եթէ Աւստրիան սպառնալու լինի գրաւել Սանջակը։ Տեղիս պաշտօնական շրջանները նախապատրաստում են հասարակական կարծիքը այդ դէպքի համար։

—

«Н. Вр.», մի ռուս դիպլօմատի առածի վրա հիմնվելով, յայտնում է, որ Հայաստանը ժամանակաւորապէս գրաւելու Ռուսաստանի դիտաւորութեան մասին տարածված լուրերը առայժմ հիմք չունեն։ Դա ծայրայեղ քայլ է. հանգամանքները դեռ ևս այն աստիճանին չեն հասել, որ հարկ լինի այդ ծայրայեղ քայլին դիմելու։

—

Թիւրքիայի վրայ ճնշում գործ դնելը, Հայաստանը գրաւելու միջոցով իբր թէ՝ տեղի չունեցաւ շնորհիւ այն հանգամանքի, որ Գերմանիան երկիւղ է կրում, մի գուցէ գերմանական նիւթական շահերը վնաս կրեն Ասիական Թիւրքիայում։ Գերմանիան իբր թէ ասել է, որ ինքը դէմ չէր լինի, եթէ Ռուսաստանը միջոցներ ձեռք առնէր Թիւրքիայի շարժումը կանգնեցնելու նպատակով Եւրոպայում։

ԹԱԼԷԱԹ-ԲԷՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«Daily Teleg.» Թերթի Կ. Պոլսի Թղթակիցը Թիւրքական ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյի հետ ունեցած մի տեսակցութիւնը հեռագրով հաղորդել է իր Թերթին յուլիսի 6-ին։

Մինիստրը ասել է Թղթակցին.

— Ուրախ եմ յայտնելու ձեզ, թէ Անգլիան իր՝ դէպի օսմ. կառավարութիւնը տածած բարեկամական զգացումների աչքի զարնող մի ապացոյցը տուեց՝ անուանելով երեք ընդհ. քննիչներ, որոնցից մինը Կ. Պոլիս՝ ներքին գործերի մինիստրութեան համար, իսկ միւս երկուսը՝ Արևելեան Անատոլիայի նահանգների երկու գօտիների համար. այդ գօտիներից առաջինը պարունակում է Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբէքիրի վիլայէթները, իսկ երկրորդը՝ Էրզրումի, Սվազի և Տրապիզոնի։ Ինչպէս գիտէք, սրանք այն նահանգներն են, ուր գլխաւորապէս բնակվում են հայերը։ Ես կարծում եմ, որ այս առաջնակարգ ու բարձրաստիճան անգլիացի պաշտօնատարների որոշ գործակցութիւնը կազմելու է դէպի բարենորոգումների գործադրութիւնն անվիճելի գլխաւոր քայլը, բարենորոգումներ՝ որոնք անհրաժեշտօրէն կարևոր են յիշեալ նահանգներին։ Մեր դեսպաններն ու հիւպատոսները այս րոպէիս բոլոր երկիրներում բանակցութիւններ են կատարում փորձառու խորհրդականներ գտնելու համար Կ. Պոլսի միւս մինիստրութիւնների համար էլ։ Օրինակ՝ լուսաւորութեան մինիստրութեան մի խորհրդականի մասին Շվէյցարիայում կատարված բանակցութիւնները գրեթէ վերջացել են։ Ֆինանսների մինիստրութեան մէջ՝ այսպէս կոչված «բարենորոգման յանձնաժողովի» օտար անդամները, որոնց աւելանալու են նաև մի ֆինանսական խորհրդական ու մի ընդհ. քննիչ, երկուսն էլ եւրոպացի, զանազան բիւջէների պատրաստութեան և ծախքերի կօնտրօլի խնդրում մեծ իրաւասութիւններ են ստանալու։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 յուլիսի

Աթէնք.—Զինուորական մինիստրութեան տեղեկութեան համաձայն, յոյները գրաւեցին Գիւմիւլջինան առանց դիմադրութեան հանդիպելու։ Ազգաբնակութիւնը ջերմ ընդունելութիւն ցոյց տուեց յոյներին։ Մահմեդականները խնդրել են իրանց վերադարձնել բօլգարների յափշտակած երկու մզկիթները, որը հաւանօրէն կը յարգվի։

—

Սօֆիա.—Բօլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ զօրաբանակների հրամանատարները զեկուցագիրներ են ուղարկել յունական և սերբիական կանօնաւոր զօրքերի գործած անգթութիւնների մասին, որոնք երբեմն գործում են մահմեդական աւազակախմբի հետ միասին։

—

Սօֆիա.—Հաշտութեան բանակցութիւնների համար լիազօրված Իվանչեվը ուղևորվեց Բուխարէստ։

Սերբերի դէմ գործող զօրաբանակի ամբողջ ճակատի վրա հանգիստ է։ Յոյները փորձ արին գրոհ տալու բօլգարների վրա, բայց յետ մղվեցին. բօլգարները իրանց յարձակման դիմեցին և գրաւեցին Բրէգալնիցի ու Պեգէյեվի վերին մասերը և այդպիսով յունական և սերբիական զօրաբանակները անջատեցին իրարից։ Բօլգարների ձախ Թևի վրա Մեստի հովտում յոյները նահանջեցին։ Բազլօգի ամբողջ հարթութիւնը մաքրված է յոյներից։

—

Բէլգրադ. — Սերբիական զօրքերը գրաւեցին Թափարչիկ գիւղը, որ Վիդինից 3 կիլոմետր հեռու է։ Սերբիական դիրքերից երեւում է պարզված սպիտակ դրօշակը։ Բօլգարները վերջին օրերս շարունակում են յարձակումներ գործել Վլասինի մօտ հին սերբ-բօլգարական սահմանի վրա։ Բոլոր յարձակումները յետ են մղված։

—

Բուխարէստ.—Վենիզէլօսը յայտնել է, որ բօլգարական կառավարութեան գլխի բացակայութիւնը խաղաղութեան կօնֆերէնցիայից՝ առիթ է տալիս կասկածելու, որ բօլգարները Սօֆիա հարցապնդումներ անելու միջոցով ձգձգելու են բանակցութիւնները։

Ռումինական Թագաւորը ունկնդրութեան է ընդունել Վենիզէլօսին, ապա Տօնչեվին, Պաշիչին և Վուկօտիչին։

—

Լոնդոն.—Ռէյտէրի ստացած տեղեկութեան համաձայն, դեսպանների խորհուրդը երեք ժամվայ նիստից յետոյ զբաղմունքները յետաձգեց մինչև ուրբաթ։ Որոշված է Ալբանիայի դրութիւնը։ Ալբանիան պէտք է կառավարվի իշխանով, որը պէտք է ընտրվի 6 ամսից յետոյ։ Այդ ժամանակամիջոցում պէտք է կազմակերպված լինի Ալբանիայի վարչութիւնը։ Այդ նպատակով պետութիւնները ուղարկում են վերահսկիչ յանձնաժողով պետութիւնների ներկայացուցիչներից և Ալբանիայի մի ներկայացուցչից կազմված։

Հաւաքվելով Ալբանիայում և ծանօթանալով երկրի զանազան մասերի, կառավարութեան ու հասարակական տարրերի հետ, յանձնաժողովը առաջարկութիւն կանէ պետութիւններին ժանդարմերիայի կազմակերպութեան վերաբերմամբ։ Օֆիցերները կը լինեն շվէդներ։ Պետութիւնները կը դիմեն Շվէդիային խնդրելով յանձնարարել այդ նպատակով մի բարձրաստիճան զինուորականի, որը ուղեկցէր յանձնաժողովին Ալբանիայում և որոշէր, թէ քանի օֆիցեր կը պահանջվի։

—

Լոնդոն.—Համայնքների պալատ. Արտաքին գործերի մինիստրի օգնականը յայտնեց, որ մեծ-բրիտանական կառավարութիւնը նախազգուշացրեց օսմանեան կառավարութեանը Բօլգարիա զօրք մտցնելու առիթով, որ չի պաշտպանի Թիւրքիային այն հետևանքներից, որոնք կարող են առաջ գալ իր բռնի գործողութիւնների շնորհիւ։

—

Կալկաթա.—Հնդկաստանի բոլոր մասերում տեղի ունեցան միտինգներ, որտեղ ընդունված բանաձևերով յայտարարվում է, որ հնդկական մահմեդականները խորին անբաւականութեամբ կը վերաբերվեն, եթէ Անգլիան փորձ անի հարկադրելու Թիւրքերին Թողնել Ադրիանուպօլիսը։ Հնդկական նացիօնալիստները աջակցում են մահմեդականներին։

—

Կ. Պօլիս.—Բ. Դրան իւրիսկօնսուլտ Բաշիդ-բէյը մօտ օրերս գնում է Աթէնք՝ Յունաստանի հետ վերջնական խաղաղութեան դաշինք կապելու բանակցութիւնները շարունակելու համար։

—

Սօֆիա.—Մոսկվայից գնացած Կարմիր Խաչի խումբը հասաւ Ռուշչուկ և ուղևորվեց Սօֆիա։

—

(Լրագիրներից)

Բօլգարիան համաձայն է զիջումներ անել իր հակառակորդ կողմերին այն պայմանով, որ հաշտութիւնից յետոյ միացեալ ույժերով կռիւ սկսեն Թիւրքիայի դէմ։

—

Գեներալ Մարտինօվիչի զօրաբանակը գրաւեց Սօֆիայի և Կիւստենդիլի միջև եղած երկաթուղային գիծը և անջատեց բօլգարական զօրքը Սօֆիայից։

—

Ֆրանսիայի ազդեցիկ շրջանները սաստիկ անբաւական են Բօլգարիայից, որը պատերազմ առաջ բերեց, ապա նոր համաձայնութիւն կայացրեց Վիէննայի հետ և այժմ էլ առիթ է տալիս եռապետեան դաշնակցութեան ակտիվ միջամտութեան։

—

Յունաց Կօնստանտին Թագաւորը ժուռնալիստների հետ խօսելիս ասել է, որ յոյները պէտք է մտնեն Սօֆիա։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.
17 յուլիսի

Պետերբուրգ.—Յուլիսի 16-ի երեկոյեան Պետական Դումայի Նախագահը բաղդ ունեցաւ ներկայանալու Նորին Մեծութեանը։ Բարձրագոյն ունկնդրութիւնը տևեց 1 ժամ և 17 րոպէ։ Նախագահը մանրամասն զեկուցում ներկայացրեց Դումայի գարնանային նստաշրջանի գործունէութեան և զբաղմունքների ընթացքի մասին։

Կալուգայի նահանգից ընտրված Դումայի անդամներ՝ Դումայի քարտուղար Դիմիտրիւկովը և կոմս Օրլով-Դաւիդովը յայտնել են Դումայի Նախագահին, որ հրաժարվում են Պետ. Դումայի անդամի կոչումից։

Բագու.—Գործադուլ արին Ռոտշիլդի նաւթարդիւնաբերական ընկերութեան և «Գեֆեստ» մեքենայական գործարանի 4000 բանւորները տնտեսական պահանջներ առաջադրելով։

Պրագա.—Չեխական պետական-իրաւական առաջադէմ կուսակցութիւնը առաջարկել է չեխական աւտոնոմ շրջանային ներկայացուցչութիւններին գրագրութիւններ չը վարել երկիրը կառավարող կառավարչական յանձնաժողովի հետ։ Չեխական արմատական կուսակցութիւնները ագիտացիա են սկսել նոր տուրքերի վճարման դէմ։ Չեխական կուսակցութիւնները կազմել են մի ընդհանուր մշտական կոմիտէտ և դիւանատուն միահեծանութեան դէմ ագիտացիա մղելու նպատակով։

Պէկին.—Վերին պալատը 126 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 76-ի ընդունել է պրեմիէր-մինիստրի պաշտօնի համար ֆինանսների մինիստր Սիւանսիլինի թեկնածութիւնը, որն արդէն հաւանութիւն է ստացել ստորին պալատի կողմից։ Նացիոնալիստները փորձ արին պալատի միջոցով անց կացնելու Նախագահին ուղղված նամակի նախագիծը, որով առաջարկվում էր նրան հրաժարական տալ պաշտօնից, սակայն կվօրում չեղաւ։

Բարսելոնա.—Ընդհանուր գործադուլ սկսվեց։ Արուարձանների բանւորները խմբովին անցնելով քաղաքի միջից քարեր էին նետում դէպի գործարանները՝ ստիպելով աշխատանքները դադրեցնել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԻԻ ԱՊԱԳԱՆ

I

Կամաց-կամաց պարզւում են Անիի ապագայի հեռանկարները։

Ամենքս գիտէինք, որ Անին հարուստ անցեալ է ունեցել, որ նա եղել է Կամսարական նախարարների ամրոցը, Բագրատունիների մայրաքաղաքը և Շիրակի գլխաւոր կենտրոնական բերդը. գիտէինք, որ Սմբատ Բագրատունին պարիսպ է քաշել Անիի եռանկիւնու տափարակ մասում, որ Աշոտ Երկաթը և Աշոտ Ողորմածը զարդարել են քաղաքը և ազգաբնակութիւնը բազմապատկել, Գագիկ I-ինի ժամանակ ծաղկել է Անին և իր փառքի գագաթնակէտին հասել. գիտէինք նոյնպէս, որ ներքին խռովութիւնների շնորհիւ Անին օտարի ձեռքն է ընկել, Վեստ-Սարգիսը քաղաքի բանալիները յոյներին է ծախել, որոնք էլ միայն քսան տարի են մնացել Անիում, ապա արշաւել են սելջուկները և քարուքանդ արել քաղաքը, սրբապղծել տաճարները և ոչնչացրել գեղարուեստական կոթողները. գիտէինք, որ դրանից յետոյ Անին դառնում է կուախնձոր պարսիկների, վրացիների և արաբների միջև. մերթ ներս են խուժել արաբները և ոչնչացրել նախորդների ստեղծածը, մերթ պարսիկները և վրացիները, և միշտ նոյն պատկերը. գիտէինք և այն, որ բնական արհաւիրքները՝ երկրաշարժը և Ասիայից ծայր առած օսմանցիները վերջնապէս կործանեցին Անին և իբրև մի քիւրդական գիւղ 1878 թւին յանձնեցին ռուսաց կայսրին՝ Կարսի նահանգի հետ...

Մենք այս բոլորը վաղուց գիտէինք, և ահա 35 տարի է, ինչ հնարաւորութիւն ունենք այցելել անցեալ փառքի սգաւոր վայրը՝ տեսնելու նրա մէջ ցցված բեկորները և այնտեղից դիտելու մեր գոյութեան մասնիկները...

Անին մեզ պատկերանում էր որպէս մի կախարդական քօղաւոր, որ հողի նոր շերտերով ծածկել է իր գաղտնիքների խորշերը. մեր մտքով երբէք չէր անցնում, թէ մէկ օր մենք կը կարողանանք տեսնել Անին առանց այդ քօղի, իր իսկական կերպարանքով և բնական տեսքով. կարճատեսութեամբ մենք հաշտվել էինք կատարված անարդարութեան հետ և Անիում բնակեցրել էինք մի վարդապետ, որպէս զի շահագործէր Անիի և Ղօշավանքի կալուածքները և շահէր ուխտաւորներին։ Անին ուխտավայր էինք դարձրել, ճիշդ այնպէս, ինչպէս ուխտավայր ենք դարձրել Բագարանը (Տիկոռը), Էջմիածինը, ս. Կարապետը, Վարագը և այլն... Սանտիմենտալ ազգ ենք. սիրում ենք անօգուտ տեղը զգացմունքներս նրբացնել և հայեացքներս անցեալին դարձնել...

Ես թերթեցի այն մատեանները, որոնց մէջ Անիի այցելուները գրել են իրանց ազգանունները. միայն թերթեցի, որովհետև այդ մատեանները կարդալու համար պէտք է ունենալ կրկնակի համբերութիւն և շաբաթներով ազատ ժամանակ։ Որքան սանտիմենտալ երեսներ, հառաչանքներ, ցաւակցութիւններ, «խրախուսանքներ»... Մէկը գրում է՝ «Եկի, տեսի և լացի»... Միւսը գրում է՝ «Ա՜խ Անի, վա՜խ Անի, քո քանդողի տունը քանդվի»... Եւ բազմաթիւ ուրիշ երկար ու բարակ նախադասութիւններ, [illegible] մատեանների մէջ։ Վանահայրը խնամքով պահում է այդ մատեանները։

Դեռ այդպէս բազմաթիւ մատեաններ մենք կը լցնէինք մեր շաղփաղփանքներով, եթէ չը քաշվէինք խելամտութեան գործունէութիւնից, որ վերջին տարիներս պատսպարվել է Անիում...

II

Երեսուն և հինգ տարի է, ինչ Անիում ապրում է մի վարդապետ. 35 տարի է, ինչ Էջմիածինը օգտվում է Անիի և Ղօշավանքի կալուածքներից. բայց ինչ է մեր արածը այդ աւերակների ուսումնասիրութեան վերաբերմամբ։

Աւելի լաւ է՝ չը պատասխանենք այս հարցին։

1904 թւից ամառները Անի է գալիս Պետերբուրգի համալսարանի պրոֆ. ակադեմիկոս Ն. Եւ. Մառը. նա եկել էր և 1892 ու 1893 թւականների ամառը, բայց դադարել էր մինչև 1904 թ., որից յետոյ ամեն ամառ եկել է Անի և աւերակների պեղումներով զբաղվել։ Պրոֆ. Մառը հեռատես հայեացքով ըմբռնել է Անիի պատմական խոշոր նշանակութիւնը և այն ազդեցութիւնը, որ կարող է ունենալ Անիի ապագայի վերաբերմամբ։ Լուսամիտ հայ անհատներ և մասնաւորապէս Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհուրդը դրամական օգնութիւն են տուել պրոֆէսորին, որպէսզի նա կարողանայ իրագործել Անիի պեղումների իր ծրագիրը։ Եւ ահա տասը տարի է, ինչ հայերի դրամներով և պրոֆ. Մառի հսկողութեամբ շարունակվում են աւերակ Անիի պեղումները. Մանուչէի մզկիթը կամ «դիւանատունը», որ վերածված է թանգարանի, այժմ լիքն է թանգարժէք հնութիւններով, կառուցված է և մի նոր շէնք՝ թանգարանի համար, այդ էլ է լեցված. բազմաթիւ հին նմուշներ մնում են իրար վրա դարսված և չեն ցուցադրվում՝ տեղ չը լինելու պատճառով։ Օրէ-օր բացվում են նոր խորշեր, յայտնագործվում են Անիի հին փառքի նոր բեկորներ...

Հայերը շարունակում են իրանց ուխտագնացութիւնը և գալիս են Անի, տեսնում աւերակները և ախ ու վախ հառաչելով՝ վերադառնում։ Ձեռներէցութիւնից և նրբամտութիւնից միանգամայն զուրկ ենք հայերս։

Էջմիածինը միանգամայն անտարբեր է։

Պրոֆեսոր Նիկողայոս Եակ. Մառի օգնութեամբ Էջմիածինը իր ձեռքը պէտք է վերցնէր Անիի պեղումների դեկը. չէ որ Անիի, Ղօշավանքի տեղը, հողը Էջմիածնին է պատկանում, և նա իրաւունք ունէր Անիում անել այն, ինչ որ կանէր քաղաքակրթված և հեռատես եւրոպացին իր սեփական կալուածքում։ Էջմիածինը աղքատ չէ գիտնական միաբաններով. նրանք պէտք է նշանակվեն Անիի վանահայր և պէտք է ղեկավարեն պեղումները պրոֆ. Մառի հետ։ Էջմիածինը մի կողմից նպաստում է Անիի պեղումների գործին իր նուիրատուների միջոցով (Պետերբուրգի եկեղ. խորհուրդ և մասնաւոր անհատներ), իսկ միւս կողմից բոլորովին անտարբեր է այդ նպաստի իրագործումով։

III

Այժմս կամաց-կամաց պարզվում է Անիի ապագան։ Անին դառնալու է հնագիտական մի ճոխ թանգարան, ճարտարապետական հրաշալիքները և գեղարուեստական կերտուածքները յաջորդ սերունդներին պատմելու են միջին դարերի հայոց կուլտուրայի մասին, նրանց աշխատասիրութեան և զարգացման տեսակի բնորոշումն են տալիս. Անին մի անգին գոհար է, որ մնացել է մեզ հայոց հին կուլտուրայից. Անին հայոց ազգային պարծանքն է։ Անտարբեր չը պէտք է լինել դէպի այդ ազգային պարծանքը։ Էջմիածինն օր առաջ պէտք է միջոցներ ձեռք առնէ այդ ազգային պարծանքը յարմարագոյն շրջանակների մէջ դնելու, մշտական այնտեղ ապրելու համար գիտնական միաբաններ և կամ աշխարհականներ նշանակէ, թանգարաններ կառուցանէ, պեղումների ընդհանուր դեկը իր ձեռքն առնէ և մտածէ Անիի «Հնագիտական ճեմարանի» մասին։

Պէտք է շտապել պատրաստել լաւերը, քանի չեն անցել փեսան ու հարսը. այլապէս ուշ կը լինի։ Կամաց-կամաց պարզելու ենք դարերի հեղինակած Անիի գիրքը և մենք, մեզանից յետոյ էլ մեր զաւակները թերթելու ենք այդ գիրքը՝ միշտ նոր երեսներ բանալով, և որոճալու ենք անցեալի փառքը, հին սերունդների ստեղծագործութիւնը և ճարտարապետական հրաշալիքները, մինչև որ մեզանից յետոյ գայ մի ուրիշ սերունդ, ուժեղ ստեղծագործական աւիւնով և ձեռներէցութեան մեծ եռանդով սկիզբ դնելու նոր ստեղծագործութեանց և հրաշալիքների, վերածնէ այն, ինչի յիշատակն և մտապատկերն է մնացել միայն, և այդպիսով մեր փոքրիկ ազգին իր վահանը տայ՝ պաշտպանվելու մարդակերների յարձակումներից...

Ապագայի այս յոյսով այժմ որոճանք հին փառքը և աշխատենք ձեռքից չը կորցնելու գոհարը և ազգային պարծանքը. նա մերն է եւ մենք պէտք է լինենք նրա տէրը ապագայում։

Գ. Տէր-Ռուբինեան

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Իր վերջին, ներկայ թւականի, ամենահպատակօրէն զեկուցման մէջ, որը տպագրված է «Извѣстія Главн. Управленія З. и З.» հանդէսի 26-դ և 28-դ համարներում, ստատս-սեկրետար Կրիվօշէինը ձևակերպել է իր հայեացքները գաղթականական խնդրի մասին Անդրկովկասում։ Նա համաձայնվում է կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի հետ, որ երկրի մէջ ցրված արքունական մանրմունր հողերը, որոնք այժմ կապալով են տրվում և որոնք, այնու ամենայնիւ, կազմում են մօտ 450,000 դեսեատին ու բաղկացած են 3½ հազար կտորներից, պէտք է թողնել գլխաւորապէս երկրի տեղական ազգաբնակութեան՝ նրա հողային կարիքները հոգալու համար և որ ռուս գաղթականների համար պէտք է յատկացնել գլխաւորապէս երկրի ազատ հողերը, որոնք մի կողմից մեծ հրապարակներ են բռնում, իսկ միւս կողմից անմարդաբնակ, ամայի և անպտուղ են։

Այդ ամայի հրապարակներից՝ իր վրա է դարձրել ստատս-սեկրետար Կրիվօշէինի առանձին ուշադրութիւնը Մուղանի դաշտը, այն դաշտը, որը ընկած է Արաքսի և Կուր գետի հովիտներում՝ Կասպից ծովի եզերքում։ Այդ ընդարձակ դաշտը, որի հրապարակը համնում է 200,000 դեսեատինի, ստատս-սեկրետար Կրիվօշէինի հաշւով, ոռոգելուց և բարեկարգելուց յետոյ, կարող է հիւրընկալել իր մէջ [illegible] մօտ 100,000 ռուս գաղթականների։

Խօսելով Մուղանի դաշտի մասին, իբրև մի ժամանակ ծաղկած երկրի մասին—ինչի համար նա պատմական վկայութիւններ է բերում նոյնիսկ Մովսէս Խորենացուց և ուրիշ հայ պատմագիրներից—ստատս-սեկրետար Կրիվօշէինը հաւատացած է, որ դաշտին կարելի է վերադարձնել նրա վաղեմի փառքը, որ նրանից կարելի է ստեղծել մի բարձր տեսակի գիւղատնտեսական վայր, եթէ նրա վրա պատշաճ հոգ տարվի. առաջին, եթէ նա, ինչպէս հարկն է, ոռոգվի իր ամբողջ տարածութեան վրա. երկրորդ՝ եթէ կառավարութիւնը իր գլխաւոր գաղթականական ուշադրութիւնը կենտրոնացնի այդ ոռոգվող հողերի բարեկարգութեան վրա. երրորդ՝ եթէ այդ դաշտի ամբողջ երկայնութեամբ, Քիւրդամիր կամ Սաբիրի կայարանից երկաթուղային ճիւղ անցնի դէպի Լէնքօրան և չորրորդ՝ երբ այդ հողերի վրա արդիւնաբերվի գլխաւորապէս բամբակ։

Նոյնիսկ մեր օրերում Մուղանի դաշտի հիւսիսային և հարաւային մասերում, որոնցից 70,000 դեսեատին արդէն ոռոգված է և որտեղ արդէն ապրում են 20,000 ռուս գաղթականներ, իւրաքանչիւր դեսեատինը բամբակից տալիս է մօտ 150 ր. զուտ արդիւնք։

Մուղանի դաշտը, պէտք է ասել, ենթակայ է մի շարք բնական աղէտների։ Դրանց մէջ գլխաւոր տեղն է բռնում մօրեխը, որը մասսաներով թռչելով գլխաւորապէս Պարսկաստանի սահմաններում ընկած Մուղանի դաշտի մասից՝ աւերում է մեր երկիրը։ Ստատս-սեկրետար Կրիվօշէինը հաւատացած է, որ մեր երկրի սահմաններում գտնվող Մուղանի դաշտը կարելի է միանգամ ընդմիշտ բարեկարգել միմիայն այն ժամանակ, երբ պարսկական մասում նոյնպէս ձեռնարկվեն այդ բարենորոգութիւնները։ Այդ է պատճառը, որ նա հակված է կարծելու, թէ այդ առիթով պէտք է համաձայնութեան գալ պարսից կառավարութեան հետ. ինչ վերաբերում է դաշտի մէջ աղով ողողված տեղերին և ճահճային տեղին, դրանք, մինիստրի կարծիքով, ժամանակաւոր աղէտների բնաւորութիւն ունեն և նրանցից կարելի է ազատվել, ինչպէս ցոյց են տալիս Եգիպտոսի և Կալիֆօրնիայի փորձերը, կանոնաւոր ոռոգմամբ և գիւղատնտեսական հմտալից աշխատանքով։

Ա. Ղուլեան

ԱՄԱՌԱՅԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔՆԵՐ *)

V

Նոր հովեր

Կազմալուծվում են դաշտի հասարակական-ընտանեկան դարաւոր սրբագործված հիմունքները։

Արմատական յեղաշրջման են ենթարկվում հասարակութեան բարոյական արժէքները։

Նորագոյն «մօդայի» անմիտ, խարուսիկ, անհամար «ստեղծագործութիւնները» հեղեղել են վերոյիշեալ վայրերի ամենախուլ անկիւնները։

Ներս մտնենք առաջին պատահած միջակ ընտանիքի բնակարանը։ Մաքուր, լուսաւոր, կարմրայատակ սենեակներ։

Ասիական հինաւուրց զարդ ու զարդարանքին միացել, ձուլվել է կիսաեւրոպական ճաշակաւոր կահաւորութիւն, թախտնցիկ, սանդղագործ վարագոյրներ, Վենսկի աթոռների շարաններ, լուացարան, փղեցիկ պահարաններ, տուալետի սեղան անուշահոտ իւղերի բազմատեսակ սրուակներով զարդարված, թանգարժէք բուֆէտ, կամօդ և այլն, և այլն...

Բնակարանը պատկանում է մի համեստ, պարտքերի մէջ թաղված արհեստաւորի, որն օրվայ ¾ մասը անց է կացնում մութ ու խոնաւ աշխատանոցում...

Ընտանիքի 45-ամեայ տգէտ մայրը և 4 կիսակիրթ, հասունացած աղջիկներն ապրում, շարժւում են «ժամանակի պահանջների» համաձայն։ Հետևում են «մօդային»,

---

*) Տես «Մշակ» № 156.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԴՐԱՄԱՏՈՒՐԳ Գ. ՀԱՈՒՊՏՄԱՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՈԳԻՆ

Սրանից մի ամիս առաջ ամբողջ Գերմանիան տօնական խրախճանքի մէջ էր։ Նա մեծ փառաւորութեամբ, ցոյցերով ու ընդհանուր ցնծութեամբ մէկը միւսի ետևից տօնեց երկու խոշոր յոբելեաններ, նախ Նապոլէոնեան կռիւների և ռուսների նահանջից յետոյ Նապոլէոնի դէմ կատարած ազգային շարժումների ու ապստամբութեան (1813 թ.) 100-ամեակը և ապա՝ Վիլհելմ II-ի կայսրութեան 25-ամեակը։

Այս երկու տօները—մէկն ազգային, միւսը կայսերական—իրանց ազգային պատմական նշանակութիւնն ունենալուց բացի՝ մի-մի առանձին միջոց էին գերմանական բիւրոկրատիայի ձեռքին հանդէս բերելու գերման ժողովրդի առաջ երկրի զինւորական ուժն իր ամբողջ մեծութեամբ, փարթամ կազմով ու կատարելագործութեան հասցրած դիսցիպլինայով և այդպիսով գրգռելու և բարձր պահելու ժողովրդի ոգին։ Արդարև, այդ տօնական օրերի ընթացքում երկրի պարծանք բանակն իր ամբողջ կազմով շարժողութեան մէջ էր. ամենուրեք ի պատիւ կայսեր, կայսերական ընտանիքի և զինւորական մեծերի կատարված զօրախաղերը, նաւախաղերը, զինւորական մրցութիւններն ու ռազմական տեսակ-տեսակ մանեօվրները շաբաթներ տևեցին՝ գործելով ժողովրդի վրա բիւրոկրատիայի ցանկացած ոգևորիչ, [illegible] ազդեցութիւնը։

Անկարելի է ուրանալ այն քաղաքական, տնտեսական և կուլտուրական հսկայ առաջադիմութիւնը, որ արել է Գերմանիան Վիլհելմ II-ի կայսրութեան օրօք։ Սակայն և անկարելի է աչք փակել միլիտարիզմի այն ծայրայեղ ծաւալումների առաջ, որ ստացել է այս երկիրը նոյն ժամանակամիջոցի ընթացքում, տալով Վիլհելմի կայսրութեանը «միլիտարիզմի քառորդ դար» արժանաւոր անունը։ Տարակոյս չը կայ, որ զինւորական ուժերի այդ խելացնոր չափերը որոշ դանդաղեցուցիչ ազդեցութիւն պիտի ունենային երկրի տնտեսական-արդիւնաբերական ուժերի վրա և արգելք հանդիսանային նրանց զարգացման աւելի արագ ընթացքին։ Եւ, իրօք, ստորև բերված թւերը ցոյց են տալիս, որ Գերմանիայի առևտրական և զինւորական ուժերը շատ անհաւասար չափերով են աճել. այսպէս՝ եթէ քառորդ դար առաջվայ պետական բիւջէն 1½ միլիարդ մարկից այսօր հասել է 3½ միլիարդի, եթէ 7 միլիարդ մարկի արտահանութիւնն ու ներմուծութիւնն այսօր բարձրացել է 19 միլիարդի, ասել է՝ եթէ երկրի բիւջէն ու արդիւնաբերութիւնը միջին հաշւով 2½ անգամ են աճել, երկրի զինւորական ուժն այսօր 4 անգամ աւելի մեծ է, քան սրանից քառորդ դար առաջ։ Չը պէտք է մոռանալ նաև այդ հանգամանքը, որ նոյն ժամանակամիջոցի ընթացքում մի կողմից երկրի ազգաբնակութիւնն աւելացել է 20 միլիոնով, նախկին 46 միլիոն ժողովուրդն այսօր դարձել է 66 միլիոն, միւս կողմից գերմանական գաղութների տարածութիւնը ներկայումս մայր երկրի տարածութիւնից 5 անգամ աւելի ընդարձակ է, բնակված աւելի քան 15 միլիոն բնիկներով։ Այս բոլորի հետ միասին աճել է նաև երկրի պետական պարտքը, այն էլ՝ անհաւատալի չափերով. Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ի եռամսեայ կարճատև կայսրութիւնից յետոյ Վիլհելմ II-ը 1888 թւին իր հօրից ժառանգեց մի երկիր, որի պետական պարտքը ընդամենը 500 միլիոն մարկ էր, մինչդեռ այսօր այդ պարտքը բարձրացել է 6 միլիարդի, այսինքն բազմապատկվել է 12 անգամ։ Պարտքի այս անսովոր աճումը տարօրինակ չի թւայ, եթէ ի նկատի ունենանք այն բազմամիլիոն գումարները, որ Վիլհելմ II-ը ծախսել է երկրի զինւորական ցամաքային և ծովային ուժերի վրա, հասցնելու նրանց ներկայ դրութեանը. ասացինք արդէն, որ Գերմանիայի ցամաքային ուժը քառապատկվել է, իսկ նրա նաւատորմը մրցում է արդէն անգլիական նաւատորմի հետ։

Ազգային և կայսերական այս երկու յոբելեանական տօները, որոնց մէջ ամենակարևոր դեր խաղացողը զինւորականութիւնն էր և որոնք հեռուից դիտողի վրա աւելի շուտ զինւորական-միլիտարիստական յոբելեանների տպաւորութիւն էին թողնում, չէին կարող չը շարժել երկրի հակամիլիտարիստական տարրերի գրգիռը և առիթ չը տալ նրանց արտայայտվելու հակառակ ուղղութեամբ, ասելու բիւրոկրատիայի երեսին, որ բաւական է երկիրը պատել զէնքի ու զրահի ցանցերով, բաւական է զինւորանոցները լցնել երկրի երիտասարդ, թարմ ուժերով և զրկել նրանց խաղաղ հանրօգուտ աշխատանքի հնարաւորութիւնից, և հասկացնելու ժողովրդին, որ հերի՛ք է տարվել միլիտարիզմի կործանաբեր հրապոյրներով և որ ժամանակը հասել, վաղուց է հասել դիմելու դէպի խաղաղ աշխատանքը և խաղաղասիրութեան գրկի մէջ նուիրվելու երկրի զարգացման և առաջադիմութեան գործին։ Հանգամանքները այս ուղղութեամբ հասարակական պրօպագանդայի դերը յանձնեցին գերմանական յայտնի դրամատուրգ Գերհարտ Հաուպտմանին. նրան վիճակվեց բաղխվելու գերմանական միլիտարիզմի ամենավառուն պաշտպանի՝ գերմանական գահաժառանգի հետ իր մի նոր երկի միջոցով հետևեալ պարագաներում։

Սիլեզիայի մայրաքաղաք Բրեսլավլը, ցանկանալով գերմանական միւս բոլոր քաղաքներից աւելի փայլուն ու շքեղ կատարել 1813-ի մեծ յիշատակը, ահագին պատրաստութիւններ էր տեսել և, ցուցադրելու համար անցած դարն իր բոլոր նշանաւոր անցքերով, կազմակերպել էր մի պատմական ցուցահանդէս, որի բարձրագոյն հովանաւորութիւնն իր վրա էր վերցրել Վիլհելմի անդրանիկ որդին՝ Գերմանիայի կրօնպրինցը։ Յոբելեանն աւելի ևս հանդիսաւոր դարձնելու համար Բրեսլավլի քաղաքային վարչութիւնը որոշել էր քաղաքի հսկայ սրահներից մէկում կազմակերպել մի հայրենասիրական տօնական ներկայացում, որի համար ընտրված յանձնախումբը նախօրօք դիմել էր Սիլեզիայի ամենափայլուն աստղին՝ դրամատուրգ Գ. Հաուպտմանին և խնդրել, որ սա յանձն առնի պատրաստել մի այդպիսի ներկայացում։

Տարակոյս չը կայ, որ տօնական ներկայացման յանձնախմբի արած ընտրութիւնը շատ էլ մտածված չէ եղել. նա հաւանօրէն առաջնորդվել է միայն մեծ դրամատուրգի հռչակով և նրա սիլեզիացի լինելով, առանց ի նկատի ունենալու այն կարևոր հանգամանքը, որ Հաուպտմանի քնարի վրա դեռ չեն շարժվել ոչ դինաստիական, ոչ իշխանական և ոչ զինւորական լարեր. նա սովորական մահկանացուների, բուն ժողովրդի երգիչն է և դեռ աւելին՝ նրա «Ջուլհակները», «Կառապան Հէնշել» և ուրիշ պիեսները սոցիալիստական տենդենցիաներ են կրում։

Հաուպտմանն ընդունել էր այդ հրաւէրը և պատրաստել մի տօնական ներկայացում, որը Գերմանիայի ամենայայտնի բեմադրողի և լաւ դերակատարների աջակցութեամբ բեմ էր հանվել Բրեսլավլում։ Դժբաղդաբար Հաուպտմանի այդ նոր աշխատասիրութիւնը դեռ լոյս չէ տեսել մամուլի մէջ. սակայն ներկայացմանը ներկայ գտնվող գերմանական քննադատները տուել են արդէն նրա կրիտիկան և մօտաւոր բովանդակութիւնը։ Այդ քննադատութիւնները խիստ տարբեր են իրարից, բոլորն էլ վերին աստիճանի սուբեկտիվ և կրքով լիքը, ուստի և արտայայտելով հանդերձ քննադատների աշխարհահայեացքն ու մտածելակերպը՝ առանձին գրական արժէք չեն ներկայացնում։

Հաուպտմանն իր այդ տօնական ներկայացման մէջ դուրս է բերել Պրուսիայի վերջին դարի քաղաքական և կուլտուրական պատմական նշանաւոր անցքերն ու դէմքերը։ Այնտեղ վերակենդանութիւն են ստացել փիլիսոփայ Ֆիխտէն, որի վառվռուն քարոզները ժամանակին ոգևորում, բորբոքում էին երիտասարդութեանը, Շտայն, Շարնհօրստ և Բլիւխեր յայտնի մինիստրները, Ֆորվերտս մարեշալը և ուրիշները։ Պատմական իրողութեան համաձայն՝ հեղինակը անորոշ ստուերի մէջ է թողել Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ին՝ ներկայ կայսրի հօրը։ Հաուպտմանը բեմ է դուրս բերել նաև Նապոլէոն I-ին նախ որպէս մի կորսիկացի մանուկ, որ հող է խաղում, ապա արդէն շրջապատված իր մարշալներով, լուրջ մտախոհ, որ փախուստ է մատնում մի այլանդակ թափօրի՝ բաղկացած հին գերմանական կայսրութեան հնացորդներից։ Յետագայ տեսարաններում Նապոլէոնը հանդէս է գալիս Իւպիտերի գահի վրա, և մինչդեռ նա որոտում, շանթեր է արձակում, բեմի լուսաւորութիւնն աստիճանաբար աղօտանում է և սկսվող ձիւնի փաթիլները հետզհետէ ծածկում են նրան սպիտակ վարագուրով։ Այստեղ հեղինակն արդէն տարել է Նապոլէոնին Ռուսաստան՝ գահավիժելու նրան իր ձեռք բերված փառքից։

Ներկայացման վերջին տեսարանը, որ ամբողջովին մի ապոթէօզ է, նուիրված է Վիլհելմ II-ի կայսրութեանը և պարունակում է հեղինակի ալլեգորիայի և նրա տենդենցների ամենախոշոր և ամենակարևոր մասը։ Փոխանակ գերմանական կայսրութիւնը ներկայացնելու իր իսկական ռէալ պատկերով, հեղինակը ձևափոխել է նրան այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում, որ նա լինէր։ Կապուտակ ջինջ երկնակամարի տակ տղամարդիկ ու կանայք, բանւորներ ու գիւղացիներ, արհեստաւորներ ու վաճառականներ, բուրժուաներ ու ազնուականներ գալիս են հերթով իրանց խաղաղ աշոգևորվում են նրա նորանոր նուաճումներով… իսկ մինչ այդ չեն նկատում, որ անհամբեր պարտքատէրերը դատական պրիստաւի ուղեկցութեամբ գրաւում են չարքաշ աշխատաւորի դառն աշխատանքի վերջին մնացորդներն՝ արհեստանոցի իրերն ու գործիքները…

Նորագոյն մարդկութեան խաշըր մոլորութիւններից մէկը՝ անբուժելի «մօդախտը» մտնում է քաղաքից-քաղաք, աւանից-աւան, տնից-տուն, իր ետևից թողնելով դառն աղքատութիւն, սնանկութիւն և յուսահատութիւն…

Գաւառական շատ վայրերում կանանց տեղական հագուստներն անցել են արդէն ազգագրական հագուստի նմուշների շարքը:

Հայկական «մինթանային», լայնափեշ «ջուբային» փոխարինել է տխրահռչակ «շանտեկլեռը» և շրջազգեստի բազմաձև, համարեա ամեն շաբաթ, ամեն ամիս փոխվող տեսակներ:

Խղճալի «մաշիկներին», անձոռնի «սոլերին» և ճլլտան «թաս-բաբիջին» բարձր կրունկաւոր, բարակքիթ, երկարավիզ, ոտքեր սեղմող, արհեստական կերպով մանրացնող կօշիկներ…

Գաւառական հարուստ սեղանի բազմազան անուշահամ խորտիկները տեղի են տալիս եւրոպական «զակուսկաների» և այլ ուտելիքների:

Այդ «մօդախտով» վարակված փափկասուն տիկինների և «օրիորդների» դիմագծերի շինծու շարժումնե՛րը, բռնազբօսիկ ժպիտն ու ծիծա՛ղն, արհեստական, անտեղի կօկետութիւնը, միմոսութիւն և կապկային ծամածռութիւնը…

Այդ գիւղաքաղաքներում կան արբունքն անցած, թառամած ու թոշնած, կիսակիրթ ու կիսագրագէտ, «մօդախտաւոր» բազմաթիւ օրիորդներ, որոնք հակառակ իրանց ծագման և մտաւոր ողորմելի պաշարին՝ դժգոհ են իրանց միջավայրից, շրջանից և արհամարհում, հոգու խորքից ատում են տեղական այն «անկիրթ», «կոպիտ» երիտասարդներին, որոնք համարձակվել են խնդրել նրանց ձեռքը:

Մերժւում է [illegible] աշխատասէր կօշկակարն իր սիրած «օրիորդից», որի ծնողների նիւթական պայմաններն աւելի նախանձելի չեն, որի կրթութեան մակարդակն իրանից բարձր չէ, որի հետ անց է կացրել իր մանկութեան քաղցր տարիները, շատ անգամ բոբիկ ու կիսամերկ թափառել, խաղացել են իրանց բնակավայրի ցեխոտ, փոշոտ փողոցների խուլ անկիւններում:

Ահա այսպիսի անտեղի քմահաճոյքներ ունեն մեր «կօրսետների» սիրահար, «պուդրակոլոր», հոտաւէտ իւղերի մէջ թաթախված օրիորդները…

«Մօդախտն» առանց դիմադրութեան խուժում է. գաւառի ամենախուլ անկիւնը մտել է նահապետական օջախների մօտ երդիկներից, կաւապատ կտուրներից, նեղլիկ դռներից և յեղաշրջել է ընտանիքի հասկացողութիւնը, մտածելակերպն ու նիստ և կացը:

Նոր սերունդը շրջապատի աւանդական կապերը խզելով, նախնական սովորութիւններն ոտնատակ տալով, հնութեան ազդեցութիւնից հեռու՝ ձգտում է հոգեկան ազատ արտայայտութիւնների, անմիտ փայլի, շռայլ կեանքի և դատարկ զուարճութիւնների:

Ահա այս հողի վրա բնականաբար առաջ է եկել հնի ու նորի, հայրերի ու զաւակների կռիւ: Մի կռիւ, որ չը նայած համարվում է առաջադիմական, անհրաժեշտ, բնական և անխուսափելի՝ այնու ամենայնիւ չունի գաղափարական ամուր հիմունքներ և սնանկ է բարոյական բարձր արժանիքներից:

Պայքարն անհաւասար է. պայքարող կողմերի ոյժերը հակադարձ յարաբերական:

Քաղաքակրթութեան հանդէպ հեղեղատն այժմ թոյլ հոսանքով գաւառական կեանքը լցնում է մահաբեր բացիլներ, թունաւորած տիղմեր, բայց հեռու չէ այն ժամանակը, երբ մտաւոր-տնտեսական յեղաշրջման կատաղի ալիքները վերջնականապէս կը մաքրեն, կը սրբեն հասարակական միջավայրից կործանարար մոլորութիւնները:

Մ. Ղազարեան

ԳՈՐՈՒ ԳԱՒԱՌԱՊԵՏԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Գորի, 17 յուլիսի

Երկուշաբթի, յուլիսի 16-ին, երեկ. ժամը $8^1/_2$-ին, երբ Բորժոմից եկող ամարանոցային գնացքը կանգնում է տեղիս կայարանում, առաջին կարգի վագոնից դուրս են գալիս տեղիս գաւառապետ Բլաուն, Թիֆլիսի նահանգական դատարանի պրոկուրորը և տեղիս քննիչ Աւշարովը, որոնք իջնելով վագոնից դիմում են դէպի առաջին կարգի բուֆետը: Դեռ հինգ քայլ չը հեռացած, վագոնի ետևից անյայտ չարագործը մաուզերի ատրճանակից արձակում է նրանց վրա հինգ գնդակ, որոնցից չորսը դիպչում է գաւառապետին՝ մահացու վէրք պատճառելով նրան, իսկ մէկ գնդակը դիպչում է պրոկուրորին՝ վիրաւորելով ոտքից: Չարագործը դուրս գալով վագոնի ետևից՝ անյայտացել է:

Գնացքը մնաց կայարանում մինչև ժամը $10^1/_2$, և վերջը վիրաւորեալներին նոյն գնացքով տարան Թիֆլիս, որտեղ գաւառապետ Բլաուն վախճանվել է:

Կասկածով բռնված են երկու մարդ:

Մեսրոպ Մարութեան

«Մշակի» երէկվայ համարում (№ 156) Գորու գաւառապետի սպանութեան առիթով հաղորդված էր բերև տեղեկութիւն, որ նրան փոխարինում է I մասի Գորու գաւառի պրիստաւ Խրուշչևը:

Խրուշչևը Թէֆլիսի I մասի՝ Վէրայի պրիստաւն է:

Բացի դրանից՝ այդ դէպքի մասին ականատեսները հետևեալ լրացումներն են անում:

Սպանութիւնը կատարվել է յուլիսի 16-ին մօտաւորապէս երեկոյեան ժամը 9-ին: Գնացքը շարժվելուց առաջ իրարանցման միջոցին վայրկենապէս երկու անյայտ մարդիկ դուրս են թռչում ատրճանակները ձեռքներին. մէկը միջին հասակով, սև փոքրիկ բեխերով, իսկ միւսը ուսանողական համազգեստով: Վեց գնդակ արձակելուց յետոյ չարագործները վագոնների տակից անցնելով գնում են դէպի Կուր գետի ափերը: Կարծելով որ չարագործները գնացքի վագոններն են մտել, դատախազը կարգադրում է կանգնեցնել գնացքն ու մանրամասն խուզարկութեան ենթարկել. խուզարկութիւնը անցաւ ապարդիւն: Թիֆլիսում ճանապարհորդներին վագոններից դուրս էին թողնում մէկ-մէկ խուզարկելուց յետոյ:

Գորի է ուղարկված քննութիւն կատարելու համար նահանգական դատարանի առանձին կարևոր գործերի քննիչ Զօլոտնիցկին և քննութեանը վերահսկու լինելու համար՝ դատախազի օգնական Լէյմիօվսկին:

Եակով Արիստախովիչ Բլաուն վախճանվել է երկաթուղային հիւանդանոցում յուլիսի 17-ին, առաւօտեան ժամը 5-ին, 37 տարեկան հասակում: Սպանութիւնից մի քանի օր առաջ Բլաուն սպառնական նամակ է եղել ստացած: Նրա մահից յետոյ մնում է կինը և 2 տարեկան աղջիկը: Բլաուն Կովկաս է փոխադրվել Ֆինլանդիայից 1911 թւին Գորու գաւառապետի պաշտօնով և դեռ անցեալ տարի կարողացաւ մաքրել իր շրջանը զանազան աւազակախմբերից՝ սարսափ ազդելով վերջիններիս վրա:

—

Երէկ տեղի ունեցաւ Գորու գաւառապետ Բլաուի թաղումը: Մարմինը երկաթուղային հիւանդանոցից տարվեց Թիֆլիսի գերմանական եկեղեցին և ապա գերեզմանատուն: Թաղման հանդէսին ներկայ էին Գորու Անտոնի եպիսկոպոսը, Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացի, Թիֆլիսի նահանգապետը, քաղաքագլուխ Ա. Խատիսեան, Գորու աւագը, համքարութիւնը և բազմաթիւ պաշտօնատար անձինք: Դամբանական ճառ արտասանեց նահանգապետը՝ գովաբանելով հանգուցեալի անձնուէր գործունէութիւնը:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ցաւալի մահ

Կարս, 16 յուլիսի

Բժ. Կար. Ղազանջեանի երիտասարդ ամուսինը ամսիս 14-ին ինքնասպանութիւն գործեց ատրճանակով: Հանգուցեալը մի քանի անգամ ինքնասպանութեան փորձեր անելուց յետոյ՝ այժմ աջողեցրեց և ազատվեց այն կեանքից, որից զզված էր, չը նայելով որ աշխարհային ամեն տեսակ բաւականութիւններով լիացած էր:

Ամսիս 16-ին ս. Նշան եկեղեցուց սկսվեց յուղարկաւորութիւնը: Ներկայ էին նահանգապետը, ոստիկանապետը և շատ ուրիշ ծառայողներ: Բոլոր խանութները փակել էին: Դագաղի վրա դրված էին 13 գեղեցիկ պսակներ. ոմանք էլ պսակի փոխարէն փող էին նուիրել բարեգործական նպատակով: Ժողովուրդը բազմաթիւ էր, փողոցները, կտուրները պատել էին մարդկանցն անտառ: Կառքերը վարձված էին մի օր առաջ: Հանգուցեալը իր բաւարար կրթութեամբ, իր եզակի համեստութեամբ սիրված ու յարգված էր բոլորից: Թողել է երկու որդի՝ մէկը աղջիկ, միւսը տղայ:

Բժ. Ղազանջեանը 1500 ր. նուիրաբերութիւն է արել հետևեալ կերպով. 1000 ր. հայոց երկսեռ դպրոցին, 200 ր. Ախալքալաքի հայոց դպրոցին, 100 ր. Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղին, 50 ր. տեղական աղքատներին և 50 ր. տպագրական ֆոնդին, և բոլորը կանխիկ վճարել է:

Սարգիս Տէր-Մելքիսեդեկեան

—

Ընթացիկ կեանք

Դիլիջան, 14 յուլիսի

Ամարանոցային եռուն կեանքն սկսված է արդէն: Հովեկները — տարբեր խաւերի ու դասակարգերի մի մեծ ժխոր — լցրել են բոլոր տները, իսկ բնակիչների մեծամասնութիւնն ամառային այս երեք ամիսներին ապաւինել է տնակներին ու հաւաբուններին: Կեանքի թանգութիւնը զգալիօրէն ցատկել է անխնայ շահագործման գագաթնակէտը. միսը, որ ի դէպ մեր հասարակութեան զբաղեցնող ամենահրատապ խնդիրն է, ծախվում է փունտը 12 կոպէկով. սոսկալի թանգ են և մրգերն ու մթերքները. բնակարանների մասին խօսելն իսկ աւելորդ է: Եւ մեր հիւր եկած հասարակութեան բողոքներն ու գանգատներն այդ մասին անվերջ ու միշտ «ձայն բարբառոյ յանապատի» են լսւում:

Մինչև ուշ գիշեր մարդիկ ժամանակն անց են կացնում մեր այսպէս կոչված «ակումբում»: Գեղեցիկ նպատակներով կազմված այդ հիմնարկութիւնը ներկայիս՝ լաւ չէ ծառայում իր նպատակին: Մինչդեռ այստեղ գտնվում է հայ դերասանների խումբը, որ ներկայացումներով կարող էր հոգեկան-մտաւոր զարգացման մեծ ազդակ լինել, աւագների խորհուրդը արհամարհանքի մատնած այդ խմբին՝ ամենայն սրատեսութեամբ բռնել է հասարակական խաղամոլութեան ջիղը. մինչև այժմ եղել է մի ներկայացում, մինչդեռ ամեն երեկոյ բոլոր յարմարութիւններով կատարվում է՝ լօտօ և թղթախաղ: Չեն թոյլատրվում ներկայացումներ՝ հասարակութիւնը «չը շահագործելու» պատրուակով, մինչդեռ ակումբի վարչութիւնը պայմաններ ստեղծել շահագործելու հասարակութիւնը տարբեր ձևերով. ամեն երեկոյ հնչում է մի զանգ. նա ձեզ հրաւիրում է լօտօյի, ընթերցարանում, ուր դուք շատ աւելի կօպէկներ էք թողնում, քան որևէ ներկայացման տոմսակ գնելիս:

Պէտք է մտածել առողջ սաղմերը, բարոյական կրթիչ սերմերը զարգացնել հասարակութեան հոգեկան-մտաւոր կեանքում:

Minor

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

—

Նուխի, 12 յուլիսի

Վաղուց է, որ Վեհ. Կաթողիկոսի անմիջական տնօրինութեամբ ու կառավարութեան թոյլտւութեամբ հանգանակութիւն է տեղի ունենում յօգուտ դպրոցական ֆոնդի:

Նուխում ֆոնդի հանգանակութիւնը շատ թոյլ կերպով է կատարվում. այսպէս՝ ամեն կիրակի մոմավաճառքի սեղանին շարված թաբախներից մէկի վրա դուք կը նկատէք երկծալ մի թերթ. դա հանգանակութեան թերթն է, որ ահա վեց ամսից աւելի է, ինչ թաբախի անբաժան ընկերն է. բացում և կարդում էք հանգանակութեան թերթը, որ ուղարկված է քաղաքից առևտրական գործով մեծ մասամբ բացակայող երէցփոխին մերձաւոր հոգևոր իշխանութիւնից և որի ստորագրութեան բաժնում նկատելի է միմիայն երկու տող. ա) հանգանակված է Զատկին 9 ր. 40 կ., բ) մի պարոնից 1 ր., ընդամենը 10 ր. 40 կ., մի թիւ, որ պարզ ցոյց է տալիս, թէ ո՞ր աստիճանի ջանք է գործ դրվում հանգանակման համար:

Չը նայած որ ֆոնդի անունով կան առաջուց խոստացված, բայց մինչև այժմ չը ստացված նուէրներ, սակայն դրանց հաշիւ չէ կարելի անել, որովհետև նուիրատուութեան մէջ ապառիկը աներկրայ ժխտելի է:

Ցանկալի և նոյն իսկ անհրաժեշտ է, որ մերձաւոր հոգևոր իշխանութիւնն ուշադրութիւն դարձնէ այս դատապարտելի անտարբերութեան վրա, առաջարկելով դուրս գալ այս քնած դրութիւնից և կազմակերպել թարմ ոյժերից հանգանակիչ մասնաժողով:

Հանգանակիչ մասնաժողովը, բացի ֆոնդի վեհ և ազգային նշանակութիւնը ժողովրդին բացատրելուց, կը ձեռնարկէ ժողովարարութեան անխտիր ամենից, շնորհակալութեամբ ընդունելով նուէրները սկսած 10 կ. փոքրիկ գումարից, ինչպէս այդ առաջարկում է «Մշակում» իր յօդուածով Գր. Զալխուշեանը Նոր-Նախիջևանից:

Այս եղանակով կատարված հանգանակութիւնը կը տայ ցանկալի դրական հետևանք, կազմելով Նուխու հայ համայնքի համապատասխան արձագանքը Վեհափառի սրբատառ կոչին:

Ն. Մանուչարեան

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

VIII

Հայ բեմի սիրողնե՞ր թէ դահի՞ճներ

Բագու, 10 յուլիսի

Անցեալ թղթակցութիւններիցս մէկում ես խօսել էի Բագուի բայօններից մէկի՝ Սև-քաղաքի ժողովրդական տանը տրվող ներկայացումների մասին. այս անգամ էլ կամենում եմ կանգ առնել նաւթաշխարհի մի ուրիշ բայօնի՝ Բալախանիի հայկական ներկայացումների մասին, որը աւելի ցաւալի ու խղճուկ վիճակի մէջ է գտնվում, քան թէ Սև քաղաքում:

Եթէ Սև քաղաքի ժողովրդական տանը ներկայացում տուողները, հակառակ իրանց կամքի, անկարող են լինում հասարակութեան և բեմի շահագործումը մեծ չափերի հասցնել, որովհետև այնտեղի տեղերի գինը 84 կոպէկից մինչև 12 կոպէկ է, որը աւելացնել թոյլ չեն տալիս, Բալախանիի սիրողները կամ quasi «դերասանները» այդ տեսակէտից միանգամայն ազատ են իրանց անելիքների մէջ և ամենաքիչ հասարակութիւն յաճախելու դէպքում անգամ նրանք գումարներ են անում:

Բալախանում կազմակերպված խումբ չը կայ, այլ ամբողջ թատրօնական գործը գտնվում է 2—3 «դերասանների» ձեռքում, որոնք՝ Ալլահը գիտէ թէ ե՞րբ և ի՞նչ կերպ են դերասան դարձել և այժմ շարունակ, տարիների ընթացքում ամառ ու ձմեռ ներկայացումներ են տալիս «յօգուտ գրպանի»:

Այդ ներկայացումների շտաբ-կվարտիրան «Բալախանիի կրուժօկ» հիմնարկութիւնն է. բացի այդ ներկայացումներից՝ տրվում են Փիթօյեվների Սաբունչի ու Զաբրատի նաւթահանքերի, Մանթաշեան ընկերութեան և «Ռուս-Կովկասեան Ընկ.» նաւթահանքերի բեմում:

Իրանց նիւթական շահերի համար ներկայացումներ տալով, պարզ է, որ մեր ինքնակոչ դերասաններն ամեն միջոց ու ջանք պէտք է գործ դնեն որքան կարելի է շատ մուտք ունենալու համար, և նրանք ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում: Պատմական պիէսների անթիւ ներկայացումների հետ միասին նրանք բեմ են հանում նաև իրանց սեփական թխածները, որոնք պէտք է, եթէ ոչ իրանց բովանդակութեամբ, գոնէ անունով թատրոն գրաւեն հասարակութիւնը. այդպիսի պիէսների շարքին են պատկանում՝ օրինակ՝ Րաֆֆիի վէպերից փոխադրված «Սամուէլը», «Դաւիթ-բէկը», «Ջահրումարը», Աբովեանի «Վէրք Հայաստանիից» թխած «Ասլան Բալասին» (վերջին պիէսն, իբրև խիստ շովինիստական մի գրուածք, որը կարող է ամբոխի ստոր կրքերը գրգռել, հեղինակը ինքը արգելել էր բեմի վրա դնելու, սակայն բալախանցի «դերասանները» ազատ համարձակ շարունակում են սեզօնում մի քանի անգամ խաղալ այդ պիէսը), բացի այդ պիէսներից՝ մի նորութիւն էլ են մտցրել հայ բեմում. դա փարսերն են, բեմական այդ խայտառակ, պօռնոգրաֆիական տիպի գրուածքները, որոնցից մինչև այժմ բարեբաղդաբար ազատ է եղել հայ բեմը և որոնց ներկայացումը պատուաստում են նրան Բալախանում մեր գեղարուեստագէտները:

Թէ ինչպիսի միջոցների են դիմում այդ պարոնները հասարակութիւնը թատրոն գրաւելու համար, ցոյց է տալիս հետևեալ փաստը: Ինչպէս յայտնի է, այս տարի լրացաւ մեր հռչակաւոր վիպագիր Րաֆֆիի մահվան 25-ամեակը: Առիթը չը պէտք էր ձեռքից բաց թողնել, և մեր «դերասանները» խոշոր, աչքի ընկնող աֆիշաների վրա յայտարարում են «Րաֆֆիի մահվան 25-ամեակի առիթով» և խաղում են… «Ղարաբաղի Աստղագէտը»: Հայ բեմական գեղարուեստի սպասաւորները մինչև անգամ չը գիտեն, որ «Ղարաբաղի Աստղագէտը» Րաֆֆիի գրչին չի պատկանում, այլ միայն նրա թարգմանութիւնն է. և մեծ վիպագրի մահվան 25-ամեակի առիթից օգտվելու և իրանց գրպանները լցնելու համար խաղում են ուրիշ հեղինակի վէպից նրա թարգմանած և ուրիշների ձեռքով պիէսի վերածված գրուածքը…

Խեղճ հայ բեմ, որի ղեկը այդպիսի ողորմելի մարդկանց ձեռքն է գտնվում:

Մի՛ հարցնէք, թէ ի՞նչ են անում այդ բոլորի առաջն առնելու համար Բագուի և Բալախանու հայ ինտելիգենցիան, հասարակական գործիչները, վերջապէս մեր «Կուլտուրական Միութիւնը»:

Վաղարշակ Թումանեան

ՁԵՌՆԱՐԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

—

Արդահան, 10 յուլիսի

Արդահանի գաւառը Կարսի շրջանում իր կաթնատնտեսական աջող և ձեռնտու պայմաններով աչքի ընկնող տեղ կարող էր գրաւել: Բնութիւնը օժտել է այս գաւառը լեռնային առատ բուսականութեամբ, գեղեցիկ արօտատեղիներով, որոնք յատկապէս անասնապահութեան համար՝ անփոխարինելի են: Սակայն բնութեան այս աստիճանի բարենպաստ պայմաններից ժողովուրդը չի կարողանում շահվել: Վրաստանի ու Ղզլախի կողմից տասնեակ հազարներով այստեղ են գալիս այսպէս կոչված «թուշ» ոչխարաբոյծները իրանց ոչխարների հօտերով, ամբողջ ամառը մնում, լիառատ կերակրում, լաւ տեսակի իւղ ու պանիր պատրաստում ու ձմեռը վրա հասնելուն պէս՝ իրանց տեղը իջնում: Նախաձեռնութեան ոգու տէր գերմանացիները տարիներ շարունակ բուն դրած գաւառում ու «զաւօդներ» բաց արած՝ տասնեակ հազարների գործ են սկսել, կաթնատնտեսութիւնը մի քանի վայրերում իրանց ձեռքը ձգել, ի միջի այլոց՝ ամենալաւ տեսակի շվէյցարական պանիր են պատրաստում ու հարիւրաւոր պուդերով արտահանում, այն ինչ գերմանացիներից աւելի հարուստ և փորձառու տեղացիները իրանց ամբողջ ուշքն ու միտքը դէպի արշինն ու փոխառքը յառած՝ գուցէ չեն էլ զգում, չեն էլ կարծում, որ նման գործի ձեռնարկութիւնը, հէնց նոյնիսկ նիւթականի տեսակէտից, կարող է աւելի շահաւէտ լինել: Մի ձեռնարկութիւն՝ որը որքան ազնիւ ու կուլտուրական ձևի շահաւէտութիւն է ընձեռում, նոյնքան և իր շրջապատի աշխատող ձեռքերին աշխատանք է հասցնում:

Արդահանի գաւառի ամենախոշոր կենտրոնը Արդահանն է, ամենախոշոր վաճառականութիւնը այստեղ է կենտրոնացած. եթէ կայ հասկացող և ինտելիգենտ տարր, դարձեալ այստեղ է: Սակայն ի՞նչ են անում սրանք, հասարակական կամ ընկերվարական ի՞նչ գործ ձեռնարկում: Համարեա թէ ոչինչ:

Խօսքս կաթնատնտեսութեան գործի ձեռնարկութեան մասին է:

Առաջին անգամ Արդահանի գաւառը մտնողի առաջ պատկերանում է անասնապահութեամբ ու կաթնատնտեսութեամբ զբաղվելու գործը:

Եթէ մեզանում անհատները դժուարանում են կաթնատնտեսութեամբ զբաղվելու համար հարկաւոր որոշ դրամագլուխը ունել անհատապէս գործ սկսելու համար, ապա նրանք կարող էին ընկերակցութիւններ կազմել և հաւաքական ոյժերով գործի ձեռնարկել: Բայց ցաւով պիտի արձանագրել, որ այդ վերջին ձևի գործունէութեան գիտակցութիւնը շատ աղօտ է մեր հասարակական շրջաններում:

Ի՞նչն է պատճառը, որ օրինակ՝ Արդահանի վաճառականութիւնը չի ցանկանում այդպիսի մի գործ սկսել: Անշուշտ նա զգում է, որ այդպիսի ձեռնարկութիւնը աւելի շահաւէտ է, քան խանութի բերածը: Չէ որ օրինակը նրա առաջն է: Եթէ նա այդպիսի քայլ չի անում, այստեղ նրա անվստահութիւնն է դեր խաղացողը և, որ ամենագլխաւորն է, այն կղզիացումը, որը առաջ է է եկել տեղացիների մէջ: Իւրաքանչիւրը ուրոյն կեանքով, խանութի չորս պատերի մէջ ամփոփված, ամենաշատը իր շուրջը համախմբած իւրայիններով արշինի ու գրուանքայի օձիքը պինդ բռնած՝ առաջ է սողսկում: Ի՞նչ է անում տեղի ինտելիգենցիան այդ ուղղութեամբ: Ոչինչ: Լէտարգիական քուն է մեզ տիրել. քնած է վաճառականութիւնը, քնած է իրաւագէտն ու ծառայող դասակարգը, քնած է ուսուցչութիւնը — մանաւանդ վերջինս, որը դպրոցից դուրս՝ այսպիսի գաւառական կենտրոններում որոշ դեր ունի կատարելու — քնած է քահանան, որ եկեղեցու չորս պատերից դուրս չի ուզում բան տեսնել: Ընդհանուր թմրութիւն:

Կաթնատնտեսութեան նման մի ձեռնարկութիւն պահանջում է որոշ հասկացողու-

---

խատանքի պտուղները դնելու Գերմանիայի ոտների առաջ, որը Աթենաս Պալլասի կերպարանքն առած՝ բազմել է մի գահի վրա: Բեմի վրա չեն երևում ոչ ֆրանսիացի գերիները, ոչ Ֆրանսիայից խլված թնդանօթները և ոչ իսկ գերմանական զօրք ու զրահ: Գերմանիան պատերազմի աստուածուհին չէ: Նա չէ կրում այն զինուորական սաղաւարտը, որ պանգերմանիստները միշտ երազում են դրված տեսնել Գերմանիայի գլխին: Նա չէ խօսում ոչ պատերազմի և ոչ զինուորական նոր օրէնքների մասին, ոչ էլ սնուցանում է ժողովրդին միլիտարիստական թունդ ոգով: Ընդհակառակը, նա օրհնում է խաղաղ աշխատանքի պտուղները, փառաբանում է խաղաղասիրութիւնը և քաջալերում այն անձնաւորութիւններին անխտիր, որոնք մեծ ջանքեր են գործ դրել գերման ժողովրդի զարգացման ու առաջադիմութեան համար:

Մի այսպիսի բովանդակութեամբ ներկայացում, կասկած չը կայ, ոչ միայն չը պիտի դիւր գար, այլ և պիտի գրգռէր այն բազմաթիւ հանդիսականների մեծամասնութիւնը, որոնք, տոգորված թունդ հայրենասիրական ոգով և հայրենի զէնքի փառքի հպարտութեամբ, ամեն կողմից թափվել էին ներկայացման հսկայ սրահը՝ յագուրդ տալու իրանց զգացումներին և խառնելու յօբելեանական տօներից ստացած տպաւորութիւնները: Դժգոհ տարրերի խուլ անբաւականութիւնները հետզհետէ խառնում են, բողոքների կերպարանք ստանում, և Բրեսլաւի քաղաքային վարչութիւնը թելադրված կրօնպրինցի անդառնալի հրամանից — խափանել այդ ներկայացումը, եթէ ոչ նա հանդիսաւոր կերպով յետ կը վերցնէ իր բարձրագոյն հովանաւորութիւնը — վճիռ է արձակում վաղաժամ փակել սրահի դռները և այլ ևս թոյլ չը տալ, որ շարունակվի այդ ներկայացումը:

Այս սկանդալը մեծ իրարանցում է առաջ բերում Գերմանիայում. ամբողջ գերմանական մամուլը շաբաթներ շարունակ զբաղվում է այդ հարցով: Ձախակողմեան մամուլը սոսկալի հարուածում է թագաժառանգին: Իսկ ինքը Հաուպտմանը Բեռլինում մի դասախօսութեամբ պարզում է հասարակութեան առջև իր մտքերը և բողոքում կրօնպրինցի և Բրեսլաւի քաղ. վարչութեան դէմ: Դեռ մինչև այսօր էլ այդ խնդրի շուրջը տաք վիճաբանութիւնները շարունակվում են թէ ժողովրդի և թէ մամուլի մէջ: Հաուպտմանին վիրաւորած օրը [illegible] լիբերալ կուսակցութեան անդամներից մէկը հետևեալ հակիրճ հեռագիրն է ուղարկում մեծ դրամատուրգին. «Ձեր տօնական ներկայացումը բնորոշում էր 1813 թւականը, իսկ նրա արգելումը բնորոշում է 1913-ը»:

Եւ իրօք, միայն գերմանական ներկայ միլիտարիստական կաստայի ոգին է ընդունակ այդ աստիճանի անհամբերատարութեան և միայն այդ ոգու բարձրաբերձ հպարտութիւնն էր, որ չը կարողանալով տանել ո՛չ Նապոլէոնեան յաղթանակների յուշերը, ո՛չ Գերմանիայի միլիտարիզմի չափաւորումը և նրա խաղաղասիրական դրութիւնը և ո՛չ էլ առ հասարակ որևէ հակամիլիտարիստական պրոպագանդա՝ չը խնայեց մեծ դրամատուրգին և, այդպիսի տգեղ միջոցով վիրաւորելով նրան, [illegible] մարտիրոսութեան փշեր խառնեց նրա վաստակած դափնեայ պսակներին:

Սակայն՝ որքան ուզում է թող արգելէ կրօնպրինցը այդ պիէսայի ներկայացումը, որքան ուզում են թող փակեն քաղաքային վարչութիւններն այդ ներկայացման սրահի դռները, Հաուպտմանի այդ երկը պիտի լոյս տեսնի մամուլի մէջ և հասարակութեան սեփականութիւնը պիտի դառնայ:

Ա. Զ.

Ժընեվ

թիւն ու պատրաստականութիւն, որից բաւականաչափ զուրկ է տեղիս հասարակութիւնը։ Կօօպերատիվ ընկերութեան անընդունակ է նաև։ Հաւաքվել, խորհրդակցել, որոշ դրամագլուխ վեր գալ, նոյնիսկ մասնագէտի հրաւիրել՝ գործը կանոնաւոր հիմքերի վրա դնելու՝ արդահանցու խելքից ու մտքից վեր է. և այս աննպաստ դրութիւնը առաջ է եկել նրանից, որ մասամբ հաւատ չեն տածում միմեանց ինչպէս շատ գաւառական կենտրոններում, նոյնպէս և այստեղ։

Ուժեղ գերմանացիների առաջ մասնակի ձեռնարկութիւնները ասուպի կեանք կունենան։ Միայն իւղ ու «չիր» պանիր շինելով չը պիտի բաւականանալ։ Պէտք է աշխատել շվէյցարական պանիր պատրաստել, որի համար հարկաւոր է մասնագէտ հրաւիրել, ունենալ համբերող դրամագլուխ։ Իսկ նման ձեռնարկութեան համար, բնական է, մասնակի փոքրիկ դրամագլուխը չէ կարող կատարելութեան հասնել։

Պէտք է համախմբվել, այլ ոչ թէ հանդիսատեսի դերում մնալ։ Նման գործի աջողութեան համար հարկաւոր է անպայման կօօպերատիվ ընկերութիւն, որի մէջ ամենախոշոր դերը անշուշտ ընկնելու է վաճառականութեանը։ Վերջինս բաւականին ուժեղ է այդ գործի գլուխը անցնելու և նոր ձեռնարկութիւնը երբէք չի խանգարի վաճառականութեան գործին, այլ ընդհակառակը մի գրաւական է իր սեփական գործի աջող առաջխաղացմանը։

Չը նայելով որ կայ այդպիսի մի մտադրութիւն և որոշ մի շրջանակում խօսվում է, սակայն չէ կարողանում դրական քայլ անել, որովհետև նման գործով անկեղծօրէն հետաքրքրվողների թիւը շատ քիչ է, դրամագլուխը փոքր։ Արդահանի միակ արդիւնաբերութիւնը պայմանաւորված է բնականօրէն կաթնատնտեսութեան աջող զարգացմամբ։ Պիտի աշխատել ձեռնարկել կաթնատնտեսական արդիւնքների պատրաստութեան և արտահանման լուրջ գործին, մանաւանդ որ փոխատու ընկերութիւնները այդ ուղղութեամբ պարապողների համար մեծ գումարներ են բաց թողնում։

Իգ. ք. Տ.-Մովս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ Թիֆլիս ժամանեց արդարադատութեան մինիստրի օգնական Զալլինը և իջևանեց Վենցել հիւրանոցում։

◆ Կովկաս է եկել քիմիայի և բակտերիօլոգիայի մասնագէտ Լ. Բուդինովը ծանօթանալու մեր երկրի գիւղատնտեսական արդիւնքների և մանաւանդ կենդանաբուծական մթերքների յատկութեան հետ։ Նա այցելեց ի միջի այլոց Մեծ-Ղարաքիլիսայի ամառային դասընթացքները և կարդաց երկու դասախօսութիւն կաթնատնտեսական քիմիայից՝ պարզելով կաթնային բակտերիաների գործունէութիւնը խմորումների ժամանակ։ Լ. Բուդինովը յայտնի է իր աշխատութիւններով, որը նա կատարել է Մոսկվայի բակտերիօլոգօ-ագրօնոմիական կայարանում։ Հետաքրքրական է նրա ճանապարհորդութեան նկարագրութիւնը, որը նա արել է Շվէյցարիայում, Հօլլանդիայում, Գերմանիայում և Ամերիկայում։

◆ Ժողովրդական Տան հայկական դրամատիկ խմբակցութեան վարչութիւնը, ի լրումն լրագիրներում տպված այն տեղեկութեան, թէ որոշված է ժողովրդական բեմի յարմար գրված լաւագոյն պիէսների համար մրցանակ տալ, խնդրում է մեզ յայտնել, որ մրցանակի համար ներկայացված պիէսները քննութեան կառնվեն խմբակցութեան ընդհանուր ժողովից յետոյ, որ տեղի կունենայ առաջիկայ աշնանը, որի մասին պաշտօնապէս կը յայտարարվի առանձին, իսկ ռեպերտուարի համար պիէսներ ընդունվում են միշտ՝ հետևեալ հասցէով՝ Тифлисъ, ул. Паскевича № 1, Михаилу Стамболціану.

◆ Յուլիսի 17-ի գիշերը, ժամը 12 և 15 րոպէին, ամբողջ Հաւլաբարը իրարանցման ու սարսափի մէջ ընկաւ սկսված հրացանաձգութեան պատճառով։ Պարզվում է, որ անյայտ չարագործները մահափորձ են կատարել մթերանոցի հերթապահ զինուոր պահակի վրա, որից վիրաւորվել է նա ծնկից վեր, ազդրից։ Ծանր վէրք ստանալով, պահակ Եաշինը ընկնում է, բայց մինչև ուշագնաց լինելը կարողանում է յարձակվողների վրա արձակել հինգ գնդակ։ Գնդակաձգութեան ձայնից զինուորին օգնութեան է հասնում պահակախումբը։ Դէպքի մօտակայքը իսկոյն շրջապատվեց զինուորներով, ոստիկաններով ու դռնապաններով, և սկսեցին որոնել չարագործներին, բայց ապարդիւն։ Դռնապաններից մէկը միայն նկատել է մի մարդու՝ Չերնօմօրսկայա փողոցով փախչելիս և որը անյայտացել է Պալաւանդօվսկայա փողոցում։ Վիրաւոր զինուորին անզգայ դրութեան մէջ փոխադրում են մօտակայ Արամեան հիւանդանոցը, ուր գիշերվայ ժամը 3-ին բժ. Վեսելովզօրովը կտրում է զինուորի ձախ ոտքը։

◆ Ոստիկանապետի օգնական Լևաշովի, քաղաքային ինքնավարութեան և կայսերական ռուսական Ջրահեղձներին ազատող ընկերութեան շրջանային ներկայացուցիչներից կազմված յատուկ յանձնաժողովը որոշել է Կուր գետում, քաղաքի սահմաններում, այն վայրերը, որտեղ թոյլատրվում է լողանալ, և նրանց սահմաններն էլ նշանակված են դրօշակներով։ Այդ տեղերը հետևեալներն են. Վէրայի կամուրջից վերև (քաղաքային լողարանը), Նիկօլայեվսկի կամուրջից ներքև (աջ ափում), Մուխրանեան կամուրջից ներքև (աջ ափում), Արբուզնայա հրապարակի մօտ (աջ ափում), Մնացականեան կամուրջի մօտ (աջ ափում), Հաւլաբարի կամուրջից ներքև իշ. Սումբաթօվների կաշու գործարանի մօտ (աջ ափում), Նաւթլուղի այգիների մօտ (ձախ ափում), Մուշտայիդի այգու մօտ (ձախ ափում) և Դիդուբէի պարօմի մօտ։

◆ Քաղաքային վարչութիւնը յուլիսի 16-ին որոշել է առաջարկել իր ագենտներին արձանագրութիւններ կազմել այն տեղերում, ուր երկաթուղային վարչութիւնը չէ շինել մայթերը, և յանցաւորներին ենթարկել օրինական պատասխանատուութեան շինարարական մասի վերաբերեալ սահմանված պարտադիր որոշումները խախտելու համար։ Այդպիսի կարգադրութիւն անելու պատճառն այն է, որ երկաթուղային վարչութիւնը քաղաքային վարչութեան դիմումներին պատասխանել է ձգձգումներով. անցեալ տարի խոստացել էր 1913 թւին շինել, այս տարի էլ՝ եկող տարի և այլն։

◆ Ինժեներ Ն. Ա. Աբէլեանի փոխարէն քաղաքային վարչութեան շինարարական բաժանմունքի գործավար է նշանակված ինժեներ Ի. Օ. Միրվելով։

◆ Քաղաքային վարչութեան գլխաւոր հաշւապահի օգնական Գ. Ի. Կարեվի փոխարէն նշանակված է Յ. Ջանաշով, իսկ վերջինիս տեղը՝ հաշւապահ Շարապեան։

◆ Այսօր տեղի է ունենալու Թիֆլիսի բնակարանավարձողների ընկերութեան խորհրդի նիստը շինութիւնների տիպը քննելու, անդամներ ընտրելու և այլ հարցերի համար։

◆ Յուլիսի 12-ին, Ռոստովում և Նոր-Նախիջևանում գործադուլ են արել տեղական գործարանների, արհեստանոցների և տպարանների բանւորները որպէս բողոք բանւորական «Правда» և «Лучъ» թերթերը փակելու դէմ։

◆ Բագուի միջնակարգ դպրոցներում 21 տարի նկարչութիւն դասաւանդող նկարիչ Պիրադովը նկարչական ճեմարանից ստացած ուսուցչական իրաւունքի իր վկայականի մէջ «ստորին» բառը քերելուն և փոխարէնը «միջնակարգ» բառը գրելուն համար դատապարտված է կալանաւորական բաժնի՝ ութ ամսով։ Քերուածքը նկատվել է պատահաբար, երբ վկայականը ներկայացվել է մինիստրութեանը Պիրադովին յաջորդ աստիճանը տալու համար։

◆ Գանձակի ոստիկանապետ Բաննիկովին սպանելու մէջ կասկածելով կալանաւորված 6 հոգուց 5-ը արձակված են, իսկ վեցերորդը՝ խուզարկու բաժանմունքի նախկին պետ Կրիկունովսկին՝ ուղարկված է բանտ։ Վերջինս ծառայութեան մէջ եղած միջոցին գանգատ էր ներկայացրել նահանգապետին, փոխարքային և ներքին գործերի մինիստրին, մեղադրելով Բաննիկովին ագենտուրայի փողերը սխալ կերպով ծախսելու մէջ։ Բաննիկովն էլ մեղադրում էր Կրիկունովսկին կալանաւորներին ծեծելու մէջ։ Ի վերջոյ Կրիկունովսկին հեռացրին ծառայութիւնից։

◆ Տղայոց երկրորդ գիմնազիայում բացված կողովագործական դասընթացքները փակվեցին։ Դասընթացքներում կային 44 ունկնդիրներ-ուսուցիչներ ու վարժուհիներ։

◆ Բագւում յուլիսի 16-ից գործադուլ են արել Ռօտշիլդ ֆիրմայի Սպիտակ քաղաքի գործարանի և Բալախանիի, Սուրախանիի և Բիբի-Էյբաթի նաւթահանքերի բանւորները, առաջադրելով մի շարք տնտեսական պահանջներ։

◆ Ալէքսանդրապօլից մեզ հաղորդում են. «Ամսի 17-ին եկաւ Ալէքսանդրապօլ Ս. Քալանթար և կարդաց չորս դասախօսութիւն կաթնատնտեսութիւնից և կենդանաբուծութիւնից։ Դասախօսութիւնը տեղի ունեցաւ ամառային գիւղատնտեսական դասընթացքներում, որոնք բացված են այստեղ անցեալ յունիսի 15-ից։ Դասախօսութիւնների առարկաներն էին՝ տնտեսական գործօնների ազդեցութիւնը կաթնատնտեսութեան վրա, կօօպերացիաների դերը գիւղատնտեսութեան արդիւնաբերութեան մէջ, Կովկասի կլիմայական պայմանների նշանակութիւնը տնտեսավարութեան ժամանակ և կենդանիների տեսակները։ Ս. Քալանթար ցոյց տուեց ունկնդիրներին ոչխարների այն ժողովածուն, որը կազմել է երկրագործութեան դեպարտամենտը կովկասեան տեսակներից։ Այնուհետև նա այցելեց այն բանջարանոցը, որը մշակվում է Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան և տեղական դպրոցի վարչութեան մասնագէտների ձեռքով»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 10 յուլիսի

«Մշակի» № 126-ում լոյս է տեսել Գետաբեկից «Դիտող» ստորագրութեամբ մի թղթակցութիւն, որի առիթով հարկ եմ համարում տալ հետևեալ բացատրութիւնը։

Չը նայելով որ Դիտողի յօդուածը լոյս է տեսել յունիսի 11-ին, և ես, որպէս կառավարիչ Ջարեքայ վանքի կալուածների, պարտաւոր էի անմիջապէս պատասխանել յիշեալ յօդուածագրին և հերքել նրա տուած անճիշդ տեղեկութիւնները, բայց որովհետև Գետաբեկի պղնձահանքի գործարանին մատակարարված փայտեղէնի ճիշդ քանակի մասին փաստացի տեղեկութիւնները ուշ ստացայ, այդ պատճառով էլ հերքումս ուշացաւ։

Դիտողը, «ապրելով Գետաբեկի պղնձահանքի շուրջը և քաջ տեղեակ լինելով այն բոլորին», իր յօդուածում մի ընդարձակ հաշիւ է ներկայացնում, թէ ինչ չափով փայտեղէն է մատակարարվում պղնձահանքի գործարանին Ջարեքայ վանքի անտառից։ Սակայն յօդուածագիրը չարաչար սխալվում է իր հաշւի մէջ. նրա ներկայացրած հաշիւը ոչ մի հիմք չունի. գործի փաստացի կողմն այն է, որ պղնձահանքի գործարանի համար փայտեղէնը մատակարարված է ոչ միայն Ջարեքայ վանքի անտառից, այլև Շամշադինի արքունական և Զուլգադարօվների անտառներից և ուրիշ տեղերից։ Այս փաստը ապացուցվում է պղնձահանքի գործարանի վերատեսչի № 749 պաշտօնական գրութիւնով, որը ուղարկված է ինձ յուլիսի 1-ին, իսկ ես ստացել եմ նոյն ամսի 4-ին։

Դիտողի հաղորդած տեղեկութիւնները համեմատելով այս պաշտօնական գրութեան տեղեկութիւնների հետ, որի պատճէնն էլ ուղարկված է տեղիս առաջնորդական փոխանորդ Լևոն վարդապետին, միանգամայն սխալ է։ Իսկ եթէ Դիտողը սրանով էլ չի բաւականանայ, ես նրան կը ներկայացնեմ վերոյիշեալ պաշտօնական գրութեան իսկականը և կամ վաւերացված պատճէնը, որ նա լիովին համոզվի իր սխալի մէջ։

Դիտողը, որպէս սրտացաւ հայ և նախանձախնդիր վանքի կալուածների արդիւնաւէտ շահագործման, գտնում է, որ այդ անտառի հսկողութիւնը շատ թոյլ է, կապալառուները առանց կառավարչի թոյլտւութեան և առանց տոմսակների ծառեր են կտրում, որը թէ վնասում է անտառի կանոնաւոր աճմանը և թէ խեղճ գիւղացիները զուր տեղը տուգանքի են ենթարկվում. և խորհուրդ է տալիս, որ կառավարիչը աւելի խիստ հսկողութիւն ունենալու համար մշտական բնակութիւն հաստատէ կամ պղնձահանքի շինութիւններից մէկում, կամ վանքում և կամ ծայրայեղ դէպքում Փիբ գիւղում։

Մենք, Դիտողի այդ պահանջը գտնում ենք միանգամայն անտեղի, և մեզ շատ տարօրինակ է թւում այդպիսի առաջարկը, քանի որ ինքը Դիտողն էլ մեզ հետ համաձայն կը լինի, որ նախ՝ վերև յիշված վայրերում ոչ մի յարմարութիւն չը կայ ապրելու և երկրորդ՝ միթէ նահանգապետը կամ վիճակաւոր առաջնորդը պէտք է նստեն առաջինը Զանգեզուրում, իսկ երկրորդը Զօվդար գիւղում, որ կարողանան ամբողջ նահանգը և թեմը կառավարել. մինչդեռ դրանք տարեկան մի կամ երկու անգամ չեն շրջում իրանց վիճակը, այն ինչ ես իմ կողմից տարվայ մէջ առ նուազն տասն անգամ այցելելով կալուածները՝ անում եմ անհրաժեշտ կարգադրութիւններ. Իսկ ընդհանուր կառավարիչը, որպէս հմուտ անտառապահ, ինչպէս յայտնի է նրա անցեալը, տարեկան մէկ կամ երկու անգամ այցելում է և իր հմտութեամբ այնքան գործ է կատարում, որչափով որ գործ չէ կարող կատարել մի այլ անձ, եթէ 12 ամիս շարունակ այնտեղ նստի։

Դիտողը լաւ պէտք է հասկանայ, որ հոգևոր բարձր իշխանութեան կողմից յիշեալ կալուածների վրա նշանակված է ընդհանուր կառավարիչ, որը ունի իր օգնականը. եթէ հսկողութիւնը թոյլ է և կալուածքների շահագործումը՝ կապալառուների զեղծումների պատճառով՝ վնասում է վանքի շահերը, այդ մասին պատասխանատու է գլխաւոր կառավարիչը հոգևոր իշխանութեան առաջ, այլ ոչ թէ ուրիշ կողմնակի անձեր։

Եթէ Դիտողը մեզ մի շաբաթվայ ընթացքում յայտնէ իր իսկական ստորագրութիւնը և մենք ճանաչենք նրան, ապա այնուհետև մենք նրա հետ մեր հաշիւները կը մաքրենք, իսկ եթէ քաղաքացիական արիութիւն չունենայ այդ անելու, մենք ստիպված կը լինենք դատարանով պահանջել։

Ջարեքայ վանքի կալուածների կառավարիչ՝

Միքայել Տէր-Աւետիքեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Լօնդօնում լուր է պտտում, որ Կիլում տեղի ունեցած տեսակցութեան միջոցին Գերմանիայի և Իտալիայի միջև համաձայնութիւն է կայացել Ասիական Թիւրքիայի վերաբերմամբ Թիւրքիան բաժան-բաժան լինելու դէպքում։ Դրա համաձայն այդ երկու պետութիւնները գործում են համերաշխ։ Իտալիան իբրև վարձատրութիւն՝ Եգէյեան կղզիներից բացի ստանալու է Միջերկրականի ծովափերի մի մասը։

◆ Ռումինական թագաւորը դիմել է սուլթանին ինքնագիր նամակով, տեղեկացնելով որ ռումինական զօրքը բուլղարների հետ միացած կը գայ Ադրիանուպօլիս խլելու թիւրքերից։

◆ Կոմս Բերխտօլդի խորհրդակցելը զինւորական մինիստրի հետ Վիեննայում բացատրում են որպէս փաստ, որ անխուսափելի է Աւստրիայի հանդէս գալը։ Պատերազմ կամ խաղաղութիւն—այդ հարցը կը լուծվի Բերխտօլդի քարտուղարի Բուխարեստ գնալուց յետոյ միայն։ Աւստրիական կառավարութիւնը յոյս ունի վերանորոգելու աւստրո-ռումինական կօնվենցիան, որը ուղղված է Ռուսաստանի դէմ։

◆ Պետերբուրգի շրջակայքում կալանաւորված է կանանց և տղամարդկանց մի խումբ, որոնք ապրում էին վրաններում և անձնատուր լինում օրգիաների։

◆ «Русск.Молва» լրագիրը հաղորդում է, որ Թուրքեստանեան գեներալ-նահանգապետի օգնական Ցլուգի ու կնոջը աւտօմօբիլով Տաշկենտից գալուն և ամարանոց անցնելուն սպասելով, ոստիկանութիւնը 2000 տեղացիներ էր քշել-բերել, որոնք 80 վերստ տարածութեամբ ջրում էին ճանապարհը, որպէսզի փոշի չը բարձրանայ։

◆ Սօֆիայից հաղորդում են, որ թիւրքերի շարժումը դադարեցված է։ Թիւրք զօրքերը սկսել են յետ նահանջել դէպի թիւրք-բուլղարական հին սահմանագիծը։

◆ Ռումինական հասարակութեան մէջ այն կարծիքն է տիրում, որ բալկանեան հինգ պետութիւնների միջև հաշտութիւն կայացնելուց յետոյ, կը կազմվի մի նոր դաշնակցութիւն ուղղված Թիւրքիայի դէմ։

◆ Յուլիսի 15-ին լրացել է յայտնի ռուս գրող Վլադիմիր Կորօլենկօյի ծննդեան 60-ամեակը։ Այդ առիթով ամեն կողմից հազարաւոր շնորհաւորական հեռագիրներ են ստացված «Русское Богатство»-ի խմբագրատանը։ Ի միջի այլոց շատ հեռագիրներ են ստացված Սիբիրի աքսորականներից։

◆ Սերբիան, ըստ երևոյթին, երկիւղ կրելով Աւստրիայի տուած սպառնալիքից՝ Սանջակը գրաւելու վերաբերմամբ, հրաժարվել է Սօֆիա մտնելու մտքից։

◆ Բերլինի քաղաքական շրջանները նկատում են Յունաստանի և Թիւրքիայի միջև սերտ համերաշխութիւն, որը ուղղված է Սերբիայի դէմ եա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

17 յուլիսի

ՑԱՐԻՑԻՆ։ Սարեպտայի մօտիկ Տումդուգօվօ գիւղում ժանտախտով մահացման մի դէպք է պատահել։

ՎԵԱՏԿԱ։ Պօտրելիխ գիւղի մօտիկ Վեատկայից անցնելու միջոցին շրջվել է մի մակոյկ, որի մէջ նստած են եղել 16 հոգի։ Խեղդվել են 5 կին։

ՊՕՐՏ-ՍԱՅԻԴ։ Տեղս հասաւ Մարօկկօյի նախկին սուլթան Մուլայ-Հաֆիդը։

ԹԷՀՐԱՆ։ Խօրասանում նորից պատահել են ժանտախտով հիւանդանալու չորս դէպքեր, որոնցից երկուսը վերջացել է մահով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մամուլի վերաբերեալ կոմիտէը արգելք է դրել «Рабочая Правда»-ի № 4-ի և «Живая Жизнь»-ի № 6-ի վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 5 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրապօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրապօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրապօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26,25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետևեալ հրատարակութիւնները.

1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ՁԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկ. Գ.
4) Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բուժարան . . . 1 ր. 50 կ.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.

Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել։

Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։

1. 10—5

ԻՆԺԵՆԷՐՆԵՐԻ ՃԵՄԱՐԱՆ
ՎԻՍՄԱՐՈՒՄ
Stadt Wismar
Բալտիկ ծովի մօտ
Մեքենագէտ ինժեն., էլէքտրօ-տեխնիկների, ճարտարապետների և երկրաչափների համար։ (Երկաթէ-բետոնի և տեխնիկօ-ագրօնոմիայի կօնստրուկցիա)։ Նոր լաբօրատօրիաներ։ Ընդունել. պայմանները—6-դաս. գիմնազիա։ (В 30143) 26—4

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդօյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելէֆօն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւն, կաթսայի, րիֆլէնօյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սրգրանեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուշ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(ու.) 7. 30—30

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ
հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրա ցերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նա շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազ մել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ ԳՆԵՐՈՎ։
Տելէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный